

Մ-39

*ՕՅաքոյան*  
*Զիլիպյան*  
*Կարեն Զիլիպյան*  
*Գրիգորյան*  
*Մարտյան*  
*6 հունիս 2007*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԻՐԱՆԻ

ԿՈԼԵԿՏԻՎ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ  
(ԸՍՏ XX ԴԱՐԻ ՊԱՏՄԱ-ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ)

Է.00.04. - «Ազգագրություն» մասնագիտությամբ  
պատմական գիտությունների դոկտորի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2007

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ  
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

МАРУТЯН АРУТЮН ТИРАНОВИЧ

КОЛЛЕКТИВНАЯ И ИСТОРИЧЕСКАЯ ПАМЯТЬ  
В КОНТЕКСТЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ  
(ПО ИСТОРИКО-ЭТНОГРАФИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ XX ВЕКА)

А В Т О Р Е Ф Е Р А Т

диссертации на соискание ученой степени  
доктора исторических наук по специальности  
07.00.04 – “Этнография”

ЕРЕВАН – 2007

Ատենախոսության բեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ **Ն. Գ. Գրիգորյան**  
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ **Բ. Գ. Գարությունյան**  
բանասիրական գիտությունների դոկտոր **Վ. Գ. Սվազյան**


Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2007 թ. ապրիլի 10-ին, ժամը 14<sup>00</sup>-ին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում (հասցեն՝ Երևան 0025, Չարենցի 15) 007 մասնագիտական խորհրդում:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2007 թ. մարտի 10-ին

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ պատմական գիտությունների թեկնածու

 **Գ. Ա. Սվազյան**

Тема диссертации утверждена на ученом совете Института археологии и этнографии НАН РА.

Официальные оппоненты: доктор исторических наук, профессор, член-корреспондент НАН Армении **Н. О. Оганесян**  
доктор исторических наук, профессор, член-корреспондент НАН Армении **Б. А. Арутюнян**  
доктор филологических наук **В. Г. Свазлян**


Ведущая организация: Ереванский государственный университет

Защита состоится 10 апреля 2007 г. в 14<sup>00</sup> часов на заседании специализированного совета 007 в Институте археологии и этнографии НАН РА (Адрес: Ереван 0025, ул. Чаренца, 15).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института археологии и этнографии НАН РА.

Автореферат разослан 10 марта 2007 г.

Ученый секретарь специализированного совета кандидат исторических наук

 **Յ. Ա. Մելկոնյան**

**Ուսումնասիրության արդիականությունը.** XXI դարում, երբ համաշխարհայինացման գործընթացներն ավելի ու ավելի մեծ արագությամբ են մուտք գործում հայաստանյան իրականություն, մեծապես կարևորվում են հայոց ազգային ինքնության և դրա առանձին տարրերի վերհանմանը նվիրված աշխատանքները: Դրանք թիվն այնքան էլ մեծ չէ և դրանք տալիս են ավելի շատ ընդհանրական պատկերացում ինքնության մասին: Այդ պատճառով էլ կարևորվում է այնպիսի աշխատանքների երևան գալը, որոնցում հանգամանորեն հետազոտված կլինեն ազգային ինքնության ընդամենը մի քանի, սակայն իմնարար տարրեր: Ներկայացվող աշխատանքը հավակնում է այդպիսին լինելու:

Տարածաշրջանային զարգացումների ֆոնին, հակամարտությունների լուծման ուղիների որոնումներում ինչպես հարևան, նույնպես և արևմտյան տարածույթ գործիչները, անուղակիորեն ճնշում գործադրելով հայոց երիտասարդ պետականությանը, «բարեկամաբար» խորհուրդ են տալիս հայ ժողովրդին մոռանալ հարևանների հետ հարաբերություններում առկա «դժվար» անցյալը, ինչի շնորհիվ միայն կարելի է պայանմավորել իրական առաջընթացը: Սա մախ և առաջ նշանակում է, որ այդ խորհրդատուները լիարժեք գիտակցում են պրոբլեմատիկ ներկայացվող խնդիրների շուրջ առկա կոլեկտիվ ու պատմական հիշողության գործոնի նշանակալից դերը հայ ինքնության կառուցվածքում: Երկրորդ, նրանք առաջարկում են մեզ մի բան, ինչին իրենց իսկ ժողովուրդները երբեք չէին դիմի, քանի որ ցանկացած էթնիկ կամ ազգային ընդհանրության համար փորձություններով լի անցյալի հիշողությունը ոչ թե բեռ է, որ կարելի է հարկ եղած դեպքում թոթափել, այլ հարստություն է, որ պետք է կարողանալ հավուր պատշաճի օգտագործել: Երրորդ և կարևորագույն հանգամանք է այն փաստը, որ, ինչպես ցույց է տրվում ներկայացվող ատենախոսության մեջ, հենց XX դարի ծանրագույն հետևանքներ ունեցող իրադարձությունների վերաբերյալ կոլեկտիվ ու պատմական հիշողությունը հայաստանցիների համար հանդիսացավ ազգային ինքնության այն հիմնական գործոնը, որը դարձավ Հայկական հեղափոխության կամ Դարաբաղյան շարժման առաջ մղող, շարժիչ ուժ և թույլ տվեց թոթափել խորհրդային անբողջատիրական ռեժիմը, ստեղծել ժողովրդավարության ուղին բռնած անկախ պետություն: Այսինքն, օտարների աչքին հետադիմական նկատվող գործոնը իրականության մեջ ոչ թե խոչընդոտեց, այլ նպաստեց ժողովրդավարական առաջընթացի կայացմանը:

Ներկայացնելով XX դարում հայոց ինքնության համատեքստում կոլեկտիվ ու պատմական հիշողության դերը, ատենախոսությունը թույլ է տալիս ավելի հիմնավորված ընտրություն կատարել XXI դարի մարտավարությունների գինանցում, ինչպես նաև՝ իրականացնել որոշ փոփոխություններ ներքին և արտաքին քաղաքական մշակույթի ձևավորման բնագավառում, մասնավորապես, քայլեր ձեռնարկել դեպի ապագա ուղղված տևական հիշողության քաղաքականության մշակման, այն մշակույթի մաս դարձնելու ուղղությամբ: Դա կարող է նպաստել նաև տարածաշրջանային հակամարտությունների ավելի խորը ընկալմանը, դրանով իսկ օժանդակելով խաղաղության հաստատման ուղիների որոնմանը:

**Աշխատանքի նպատակն ու խնդիրները.** Հետազոտության գլխավոր նպատակն է XX դարի պատմա-ազգագրական նյութերի հիմամբ վերհանել հայոց ազգային ինքնության համատեքստում կոլեկտիվ ու պատմական հիշողության (մասնավորապես, հայերի ցեղասպանության և որպես այդպիսին ընկալվող հայերի կոտորածների և բռնազաղթների հիշողության) զբաղեցրած տեղն ու դերը, դրա

բաղկացուցիչ տարրերն ու դրսևորման հիմնական ձևերը, ձևավորող գործոնները, կառուցման մեխանիզմները և փոխակերպումների ուղիները, մոբիլիզացիոն ներուժը, անցյալի ու ներկայի փոխհարաբերություններում խաղացած դերը և այլն:

Ըստ այդմ, առաջադրված են մի շարք ընդհանուր և մասնավոր խնդիրներ: Ընդհանուր խնդիրների թվում առանձնանում են հետևյալները. ա) բացահայտել ներկայում տեղ գտած իրադարձությունների դերը անցյալի վերաիմաստավորման գործում, հետազոտել անցյալի դերը ներկայի մասին պատկերացումների ձևավորման մեջ, բ) քննարկել անցյալի քաղաքական կիրառումների ձևերը, գ) վեր հանել տարեդարձային նշումների (հիշատակումների) դերը կոլեկտիվ հիշողության պահպանման և փոխանցման մեխանիզմում, դ) լուսաբանել հասարակության քաղաքական մշակույթի ձևավորումները կոլեկտիվ և պատմական հիշողության համատեքստում, ե) ուսումնասիրել XX դարավերջի ճգնաժամից դուրս գալու փորձերի զուգակցման ձևերը XX դարակզբի ճգնաժամի հաղթահարման համար մղվող պայքարի հետ, գ) դիտարկել պատկերագրությունն իր թեմատիկ բազմազանությամբ իբրև ինքնության դրսևորման միջոց և ուսումնասիրության սկզբնաղբյուր: Մասնավոր խնդիրների թվում են հետևյալները. ա) հետազոտել 1915 թ. ցեղասպանության դերը հայոց կոլեկտիվ և պատմական հիշողության մեջ, ուսումնասիրել «միրիող» հիշողության ակտիվացման ուղիները, բ) վերհանել Մեծ եղեռնի և սումգայիթյան կոտորածների ժողովրդական համադրությունները, գ) ցույց տալ պատկերագրության մեջ տեղ գտած գրական-գեղարվեստական ստեղծագործությունների դերն ու նշանակությունը ինքնության ձևավորման գործում, դ) քննարկել կոլեկտիվ և պատմական հիշողության դրսևորման տարեթվային և տեղանվանական միջոցները, ե) ուսումնասիրել կոլեկտիվ և պատմական հիշողությունը ողբի և հուզական դրսևորումներում, գ) սումգայիթյան ոճագործության իրականացման, պատասխանատուների բացահայտման, սատարման և պատժի ժողովրդական ընկալումների հետազոտությամբ վեր հանել կոլեկտիվ և պատմական հիշողության դրսևորման ձևերն ու փոխակերպման ուղիները, ե) հետազոտել անցյալի և ներկայի վերագնահատման գործընթացը, ցույց տալ դրա նշանակությունը ինքնության փոփոխության մեջ, ը) լուսաբանել «ցեղասպանություն» հասկացության սահմանների ընդլայնման և ազգային ինքնության միջև եղած առնչությունները, թ) ի հայտ բերել ցեղասպանություններից խուսափելու հնարների ժողովրդական քաղաքականության եզրերը:

**Գրականության և սկզբնաղբյուրների տեսություն.** Աշխատանքում օգտագործված գրականությունը կարելի է բաժանել երկու հիմնական խմբի: Առաջին խմբի մեջ են մտնում ազգային ինքնության ու, մասնավորապես, կոլեկտիվ և պատմական հիշողության տեսական հարցերին, նաև այդ ինքնության կոնկրետ դրսևորումների դիտարկմանը նվիրված աշխատանքները: Սրանց մանրամասն անդրադարձ է կատարված ատենախոսության առաջին գլխում: Երկրորդ խումբն են կազմում հիմնականում Հայաստանի նախախորհրդային (Բ. Իշխանյան, Ե. Լալայան, Լեո և այլոք), խորհրդային (Լ. Խուրշուդյան, Ջ. Կիրակոսյան, Ա. Համբարյան, Ա. Հովհաննիսյան, Ա. Մնացականյան, Մ. Ներսիսյան, Հ. Սիմոնյան և այլոք), ետխորհրդային շրջանի (Լ. Աբրահամյան, Ե. Գասպարյան, Ռ. Խուրշուդյան, Ն. Հովհաննիսյան, Յու. Հովսեփյան, Ա. Ղազիյան, Ա. Մանուկյան, Վ. Սվալպյան, Բ. Ուլուբաբյան և այլոք) և Սփյուռքի հայ հեղինակների (Ա. Անտոնյան, Գ. Բարդակչյան, Յու. Բարսեղով, Շ. Թորիկյան, Գ. Լազյան, Ռ. Հովհաննիսյան, Ա. Շիրակյան, Ռ. Փիրունյան և այլոք) պատմագիտական (այդ թվում և ազգագրական, բանագիտական, պարզապես նկարագրական) աշխատությունները, որոնք վերաբերում են ուսումնասիրվող ժամանակաշրջանի XX դարի հայոց պատմության, կենցաղի ու

մշակույթի տարաբնույթ հարցերի լուսաբանմանը: Թեմայի առանձին հարցերի պարզաբանմանը մեծապես նպաստել են հայ գրողների ստեղծագործությունները (Ա. Ահարոնյան, Գ. Էմին, Հ. Շիրազ, Ե. Չարենց, Սիամանթո, Պ. Սևակ), նաև որոշ գրաքննադատական (Ս. Աղաբաբյան, Ե. Գայանյան, Ա. Եղիազարյան, Հր. Թամրազյան) բնույթի աշխատություններ:

Աշխատանքի աղբյուրագիտական ատաղձը կազմում են դաշտային ազգագրական հետազոտությունների ընթացքում գրանցված նյութերը, նաև խորհրդային ու արտասահմանյան մամուլի հրատարակումները, արխիվային նյութեր:

Ղաշտային նյութերը գրանցվել են գերազանցապես 1988-1990 թթ. Ղարաբաղյան շարժման տարիներին Երևանում, դրանց հավաքումը շարունակվել է նաև հաջորդող տարիներին, ընդհուպ մինչև մեր օրերը: Ղաշտային նյութերը ներառում են ինչպես ազգագրական դիտարկումներ, Շարժման մասնակիցների կարծիքների, որոշ պարագաներում՝ ելույթների գրանցումներ, նույնպես և համերախավաքների, երթերի լուսանկարահանումներ: Հատկապես մեծ ուշադրություն է հատկացվում Շարժման պատկերագրական նյութի՝ ցուցապատառների դիտարկմանը, քննարկմանը, վերլուծությանը: Ղա պատճառաբանված է մի շարք հանգամանքներով, որոնց մեջ կարևոր տեղ է գրավում այն փաստը, որ մարդկային գործունեության տարբեր բնագավառներում պատկերների միջոցով տեղեկատվության, հիշողության գրանցման, պահպանման ու փոխանցման միջոցը հայտնի է հնուց անտի, եղել է բավականին արդյունավետ և գործածական է մինչ օրս:

Ցուցապատառների՝ իբրև քարոզչության միջոցների, արդյունավետությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե որքանով է դրանց ստեղծողներին հաջողվում գաղափարները մատչելի դարձնել, օգտագործել այնպիսի կերպարներ, խորհրդանիշեր, պատկերման ժանրեր, կյանքի հետ կապված սյուժեներ, որպեսզի մարդիկ հասկանան, նրանց հոգեհարազատ դառնա պատկերի ու համառոտ տեքստի միջոցով փոխանցվող իմաստը: Հաճախ լինելով ժողովրդական տրամադրությունների չմիջնորդավորված ցուցիչներ, իսկ որոշ դեպքերում էլ ստեղծվելով քաղաքական ուժերի կողմից, ցուցապատառները հսկայական տեղեկատվություն են պարունակում իրենց ժամանակաշրջանի մասին, օգնում այն ավելի լավ հասկանալու: Դրանք ինքնության յուրահատուկ հանգույցներ են, դեպի ուր ձգվում են և որտեղ կենտրոնացած են բազմաթիվ և տարբեր թելեր: Այդ հանգույցների՝ յուրահատուկ միկրոկոսմոսների բացումը թույլ է տալիս դիտարկել մակրոկոսմոսի բնույթի երևույթներ:

Ցուցապատառները՝ հասարակական գործընթացների պատկերագիր «վկաները», սովորաբար անմիջապես արձագանքում են իրադրության փոփոխություններին, ուստի և դրանցով շատ հարմար է լինում հետևել հասարակական զարգացումների փուլերին, իսկ դրանց բովանդակային փոփոխությունների վերլուծության միջոցով՝ քաղաքական կողմնորոշումների և ինքնության ձևավորմանը: Այս առումով Ղարաբաղյան շարժումը ուսումնասիրության հարուստ և մեծ դաշտ է ներկայացնում: Ղարաբաղյան շարժումը խորհրդային Միության տարբեր մասերում իրար հաջորդած զանգվածային ելույթների շարքում առաջին իրոք համաժողովրդական ընդվզումն էր: Ուստի և, նախադեպ չունենալով՝ այն իր առանձնահատկությունները մշակում էր տարբերայնորեն, պետական հզոր մեքենային դիմակայելու պայմաններում: Արագ փոփոխվող իրադարձություններին զուգահեռ, փոփոխություն էր կրում և ժողովրդի ինքնությունը:

Ղարաբաղյան շարժումն ընդգրկում էր ԼՂԻՍ-ը և Հայաստանը՝ յուրաքանչյուր քաղաքում ստեղծվում էին իրենց պակաստները, առաջ էին քաշվում

երևանյան հանրահավաքներում հնչածներից էապես չտարբերվող իրենց կարգախոսները, սակայն ատենախոսության համար գլխավոր սկզբնաղբյուրի դեր է խաղացել այն ցուցապաստառները, որոնք հանդիպում էին երևանի փողոցներում և հրապարակներում, չնայած, ըստ տեղեկատվության առկայության և անհրաժեշտության՝ ներգրավված է համեմատական նյութ և այլ տարածաշրջաններից: Սա գերազանցապես պայմանավորված է այն հանգամանքով, որ երևանը խճանկարային ձևով ներկայացնում էր հայության ազգապարկան դիմագիծը և, ինչը սակայն կարևոր չէ, 1980-ական թթ. վերջին այստեղ էր կենտրոնացած հանրապետության բնակչության շուրջ 1/3, ամենաակտիվ մասը:

Ցուցապաստառների հեղինակների թվում հանդես էին գալիս տարբեր տարիքի ու մասնագիտության տեր, կրթական տարբեր ցենզ ունեցող մարդիկ, այդ թվում ինչպես դպրոցականներ և ուսանողներ, այնպես էլ մեծահասակ մարդիկ, ինչպես բանվորներ, նույնպես և մտավորականներ, գրագետ և այդ հարցում խնդիրներ ունեցող քաղաքացիներ, ինչպես վրձինն առաջին անգամ ձեռքը վերցնող, սիրող, նույնպես և արհեստավարժ նկարիչներ: Ատենախոսությունում նպատակ է դրվում իրականացնել ցուցապաստառների բովանդակություն քննությունը, այդ կերպ ժողովրդի ինքնության դրսևորումներին անդրադառնալով:

Ղարաբաղյան շարժման տարիներին (1988-1990) ստեղծված ցուցապաստառների մեջ առանձնանում են հետևյալ թեմատիկ խմբերը, որ ստորև ներկայացվում են ըստ միավոր-ցուցապաստառների մոտավոր քանակության. ա) հայերի ցեղասպանությունը, սոււձայիթյան ոճրագործությունը և դրանց հետ կապված զարգացումները (370), բ) հայ ժողովուրդը, հայոց լեզու, հայկական դպրոցներ (86), գ) վերաբերմունքը Կենտրոնի՝ ԽՍՀՄ ղեկավարության (այդ թվում Ռուսաստանի և ռուսների) և խորհրդային կարգերի նկատմամբ (72), դ) վերաբերմունքը վերակառուցման, հրապարակայնության ու դեմոկրատացման քաղաքականության նկատմամբ, բյուրոկրատիայի քննադատություն (66), ե) Ղարաբաղը՝ Հայաստանի մաս (63), զ) վերաբերմունքը ԽՍՀՄ-ի ու նրա քաղաքականության նկատմամբ (55), է) վերաբերմունքը խորհրդային զորամիավորումների տարածաշրջանում խաղաղացած դերի նկատմամբ (52), ը) «Ղարաբաղ» կոմիտե, «Կոունկ», Պ. Հայրիկյան (41), թ) ազգերի ինքնորոշման իրավունքը և ԽՍՀՄ սահմանադրության թերիմաստությունը (37), ժ) Ղարաբաղի խնդիրը վերակառուցման, հրապարակայնության, դեմոկրատացման քաղաքականության և արդարության լույսի ներքո (36), ժա) Հայաստանի անկախությունը (30), ժբ) պանիսլամիզմ և պանթուրքիզմ (22), ժգ) Ադրբեջան և ադրբեջանցիներ (17), ժդ) բնապահպանական խնդիրներ (15), ժե) վերաբերմունքը խորհրդային Հայաստանի դեկավարության նկատմամբ (15), ժզ) վերաբերմունքը Գերագույն խորհրդի նստաշրջանի և պատգամավորների նկատմամբ (13) և այլն:

Այս թեմատիկ ցուցակի կարևորագույն առանձնահատկությունը թերևս այն է, որ հայերի ցեղասպանությանը վերաբերող ցուցապաստառները մի քանի անգամ գերազանցում են Ղարաբաղյան շարժման թվում է թե հիմնական Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու գաղափարին վերաբերող ցուցապաստառներին: Կարծում ենք, որ սա վկայում է ցեղասպանության ու՝ սոււձայիթյան ոճրագործությունների թեմատիկայի, դրանցով պայմանավորված գործընթացների ավելի առաջնային լինելու հանգամանքը, սակայն, ինչպես կտեսնենք ատենախոսության հետագա շարադրանքում, ոչ թե ի հաշիվ բուն ղարաբաղյան հարցի լուծման խնդրի, այլ որպես դեպի այդ լուծումը տանող ուղիներից կարևորագույնի: Հենց միայն ցեղասպանության թեմայի դիտարկումը հնարավորություն է ընձեռում քայլ առ քայլ հետևելու հասարակական մտածողության և ընդհանրապես հասա-

րակության գործելակերպի արմատական ձևափոխման աստիճանական ընթացքին:

Աղբյուրագիտական մեծ արժեք են ներկայացնում նաև պաշտոնական և ինքնահրատ մամուլի հրապարակումները, որոնք հնարավորություն են տալիս մասամբ վերականգնել այն ֆոնը, որի վրա ծավալվում էին Ղարաբաղյան շարժման իրադարձությունները:

Աշխատանքի տեսական և մեթոդաբանական սկզբունքները. Հիշողության թեմատիկան սերտորեն առնչվում է տարբեր ակադեմիական գիտությունների, այդ թվում պատմության, ազգաբանության, արվեստի, գրականության և այլ ուղղությունների հետ, ուստի և օգտագործել ենք այն մեթոդները, որոնք կիրառվում են նշյալ գիտական դիսցիպլիններում: Այսպես, հետազոտության մեջ լայնորեն օգտագործվել է պատմահամեմատական մեթոդը: Քանի որ հետազոտության նյութը նաև պատկերագրություն է, հաճախ դիմել ենք պատկերագրությունն ուսումնասիրող սեմիոտիկ վերլուծության մեթոդին: Հայ և օտար գրողների ստեղծագործություններից բերված մեջբերումների հիման վրա ստեղծված ցուցապաստառները քննարկելիս դիմել ենք գրականագիտական վերլուծության մեթոդին: Ազգագրական դաշտային նյութը գրանցելիս մեծապես օգտվել ենք արդի ազգաբանության մեջ լայնորեն կիրառվող «խտացված նկարագրության» մեթոդից, իսկ ազգագրական նյութի վերլուծության ժամանակ՝ նաև գիրքյան մեկնաբանական ազգագրական մեթոդից: XX դարի վերջին տասնհինգամյակը ու, մասնավորապես, սոցիալ-քաղաքական կյանքում և ազգային ինքնության մեջ արմատական փոփոխությունների բերած Ղարաբաղյան շարժումը, կուլեկտիվ և պատմական հիշողության տեսանկյունից, իրենց մեջ պարունակում էին բազմաթիվ անդրադարձեր ողջ XX դարին, ուստի և նպատակահարմար է դիտվել այդ դարի իրադարձությունների դիտարկումը հետահայաց մեթոդի կիրառմամբ:

Հետազոտության գիտական նորույթը և գործնական նշանակությունը. Ատենախոսության մեջ առաջին անգամ փորձ է արվում լրացնել հայաստանյան իրականության մեջ հիշողության տեսության մասնագիտական դիտարկման շուրջ առկա բացը, անդրադառնալ կուլեկտիվ և պատմական (մասնավորապես, հայերի ցեղասպանության և կոտորածների) հիշողության դերին XX դարի հայ ինքնության համատեքստում, նաև պատասխաններ ներկայացնել այն հարցերին, թե որո՞նք են այդ հիշողության բաղկացուցիչ տարրերը, դրանք ձևավորող գործոնները, կառուցման և փոխանցման մեխանիզմները, դրսևորման հիմնական օրինաչափությունները, փոխակերպումների ուղիները, դերն ու նշանակությունը ազգային ինքնության մեջ, էքոնոմիկիզացիոն ներուժը, անցյալի ու ներկայի փոխհարաբերություններում խաղացած դերը, քաղաքական վերնախափ կողմից կիրառման ձևերը և այլն:

Խորհրդային շրջանի հայ պատմագիտությունը նշված հարցերին խորությամբ չի անդրադարձել: Խնդրին՝ տեսական առումով, գրեթե չեն անդրադարձել նաև ետխորհրդային շրջանի հայաստանցի հետազոտողները: Այս առումով առանձնանում է ամերիկացի հետազոտող և Ղաղվիկի ատենախոսական աշխատանքը, ուր մեծ ուշադրություն է հատկացվում հիշողության և ինքնության միջև առկա կապին: Հայերի ցեղասպանության հիշողությունները բանավոր պատմությունների և ինքնակենսագրական հիշողությունների, պատմական գրույցների ու երգերի համադրմամբ, շահեկանորեն քննարկված են Վերժինե Սվազյանի մի շարք արժեքավոր աշխատություններում: Այս համատեքստում ներկայացված ա-

տեմախոսությունն առաջին հերթին առանձնանում է վերը նշված մի շարք նորովի հարցադրումներով:

Ատենախոսությամբ ազգաբանական գիտության մեջ առաջին անգամ վեր է հանվում ազգային պատմության մեջ ժամրագույն հետևանքներ ունեցող իրադարձությունների շուրջ կոլեկտիվ ու պատմական հիշողության դերը հեղափոխական բնույթ ունեցող ժողովրդական շարժման զարգացումներում, որն ի վերջո բերում է ազգային ինքնության կարևորագույն տարրերի արմատական փոփոխությունների և անկախ պետականության կերտման: Աշխատանքում առաջին անգամ առաջ է քաշվում այն տեսական դրույթը, որ նշված բնույթի հիշողությունները որոշակի իրավիճակներում կարող են ոչ թե խոչընդոտել, այլ նպաստել առաջադիմական բնույթի հասարակական վերափոխումների կայացմանը: Ատենախոսությամբ նաև առաջին անգամ է հասարակության ազգաբանական ուսումնասիրության համար գիտական շրջանառության մեջ դրվում նոր տիպի աղբյուրագիտական նյութ՝ ճգնաժամային իրավիճակներին բնորոշ պատկերագրությունը՝ հանձին Արարաբայան շարժման ցուցապատառներին:

Սույն ուսումնասիրությամբ առաջին անգամ փորձ է արվում նաև բացահայտել Արարաբայան շարժման դերը որպես XX դարի հայ ինքնության հանրագումարային տարրեր պարունակող հասարակական երևույթի, ինչնով մեկ անգամ ևս կարևորվում է այդ Շարժման նշանակությունը հայոց վերափոխված ինքնության կերտման գործում: Այդ գործընթացի վերլուծությունն օգնում է տեսական և մեթոդաբանական առումներով ավելի լավ հասկանալու կոլեկտիվ և պատմական հիշողության գործառույթը ճգնաժամային իրավիճակում հայտնված հասարակության դժվարությունները հաղթահարելու և որակապես նոր աստիճանի հասնելու գործում:

Ուսումնասիրության գործնական նշանակությունն առաջին հերթին կայանում է նրանում, որ վերլուծելով հիշողության դերը հայոց ազգային ինքնության կառուցվածքում, փաստորեն մատնանշվում են նաև այն ուղիները, որոնց հետևողական իրականացումը կարող է նպաստել խաղաղության կայացմանը հարավ-կովկասյան և առաջավորասիական տարածաշրջաններում:

**Աշխատանքի փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը.** Աշխատանքի հիմնական դրույթները հրապարակված են ավելի քան երեսուն գիտական աշխատություններում (զեկուցումների հիմնադրույթներ, հոդվածներ, մեմագրություն): 1990 թ. սկսած կարդացվել են գիտական զեկուցումներ հանրապետական և միջազգային գիտաժողովներում ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում (Ռուսաստան, Ուկրաինա, Վրաստան, Ղազախստան, Ղրղըզստան): Ատենախոսությունում դիտարկված հարցերի շուրջ 1991, 1998, 2004 թթ. կարդացվել են դասախոսություններ և իրականացվել են քննարկումներ ԱՄՆ տարբեր՝ Նևադայի, Բերկլիի, Թաֆթսի, Սիչիգանի, Հյուսիս-արևմտյան, Մասաչուսեթսի տեխնոլոգիական, Ռայսի, Հյուսիս-արևելյան, Կալիֆոռնիայի, Հարվարդի համալսարաններում:

Ատենախոսությունն ամբողջությամբ քննարկվել, հավանության է արժանացել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արդիականության ազգաբանության և Ազգագրության բաժինների համատեղ նիստում:

**Աշխատանքի կառուցվածքը.** Աշխատանքը բաղկացած է ներածությունից, յոթ գլուխներից, երակայություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից, որտեղ են գտել շուրջ 250 լուսանկարների վերատպությունները և լուսանկարների մանրամասն ցանկը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այստեղ պարզաբանված են ատենախոսության արդիականությունը, նպատակն ու խնդիրները, հանգամանորեն ներկայացված է օգտագործված գրականության ու սկզբնաղբյուրների վերլուծությունը, անդրադարձ է կատարված աշխատանքի իրականացման տեսական ու մեթոդաբանական սկզբունքներին, շեշտված է հետազոտության գիտական նորույթը ու գործնական նշանակությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՈՒՄ. ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

Հիշողության թեմատիկան խիստ ընդգրկում է և հայաստանյան գիտական իրականության մեջ տեսական առումով գրեթե չի ներկայացված: Այդ իսկ պատճառով ներկա գլխում նպատակ է դրվում, օգտագործելով հարցի շուրջ առկա արևմտյան հեղինակների հիմնարար աշխատությունները, անդրադառնալ «հիշողություն» երևույթի ազգաբանական դիտարկմանը վերաբերող կարևորագույն հարցադրումներին, ինչը թույլ կտա ուրվագծել այն դաշտը, որի ֆոնին ծավալվելու են ատենախոսության հիմնական դրույթների զարգացումները:

**§ 1. «Անցյալ» հասկացության շուրջ:** Մարդկանց համար անցյալն իրենից ներկայացնում է մի ժամանակաշրջան մինչ այն իրադարձությունները, որոնք ուղղակիորեն զրանցվել են որևիցե անհատի հիշողության մեջ: Լինել որևէ մարդկային հասարակության անդամ, նշանակում է քո տեղը ունենալ, տեղավորել ինքդ քեզ նրա անցյալում, եթե միայն չես մերժում այն: Այդ պատճառով էլ անցյալը մարդկային գիտակցության մշտական չափումներից է, մարդկային հասարակության հաստատությունների, արժեքների և այլ մոդելների անխուսափելի բաղադրամասերից: Անցյալն ու ներկան միմյանցից ամբողջությամբ առանձնացված միավորներ չեն: Պատմության մեծ մասի ընթացքում մենք գործ ունենք այնպիսի հասարակությունների ու համայնքների հետ, որոնց համար անցյալն իրապես հանդիսանում է օրինակ, մոդել ներկայի համար:

Անցյալի վերհիշումը ակտիվ, կառուցողական գործընթաց է, այլ ոչ թե տեղեկատվության սովորական վերականգնում: Հիշել նշանակում է անցյալի մի մասը տեղադրել ներկայի հայացքների համակարգի ու կարիքների սպասարկման մեջ: Գրեթե բոլոր քաղաքական հռետորությունները, այդ թվում և հեղափոխական շարժումները, հենվում են անցյալին՝ որպես լեգիտիմացման միջոցի: Ու թերևս Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակներից էր, որ ինչպես ֆրանսիական, այնպես էլ եվրոպական հասարակություններում սկսեց աստիճանաբար ձևավորվել ազգային պատմական գիտակցությունն իր ենթակառուցվածքներով: XIX դարից էր, որ գիտնականներն ու քաղաքական գործիչները սկսեցին ընդունել անցյալի և ազգի միջև առկա հիմնարար կապի կարևորությունը: Այդ կապն էր, որ հանդիսացավ կարևորագույն գործոններից մեկը ազգայնականության աճի ու ազգակառուցման զաղափարախոսություններում, ընդհանրապես կապիտալիստական ազգերի ձևավորման գործընթացում:

Հիշողությունը և, մասնավորապես, պատմական հիշողությունը «թնիկ ընդհանրություն», «ազգ», «ազգային ինքնություն» եզրերը բնորոշող կարևորագույն տարրերից է: Այն բազմափունջ է և մրցակցող, ինչն էլ բերում է ազգային

ինքնությունների վերամեկնաբանումների շարունակական գործընթացի: Թե պատմական, թե կոլեկտիվ հիշողությունը հենված է մարդկանց գիտելիքներին և վերաբերմունքին իրենց ազգի իրական կամ պատկերացրած պատմական անցյալի ամբողջական կամ առանձին դրվագների շուրջ: Ամեն սերունդ իր հետ բերում է ազգային ինքնության իր սեփական մեկնաբանումներ, այդ իսկ պատմառով դրանք երբեք ֆիքսված կամ ստատիկ չեն, այլ միշտ էլ վերակառուցվում են ի պատասխան նոր պահանջների, հետաքրքրությունների և պատկերացումների, չնայած միշտ էլ գտնվում են որոշակի շրջանակների մեջ:

**§ 2. Կոլեկտիվ և պատմական հիշողության անհատական ու սոցիալական չափումները:** 1. *Դրվագներ հարցի նախապատմությունից:* Հիշողության հարցերը հին հույների ժամանակներից սկսած փիլիսոփաների ու այլ մտածողների համար եղել են գլխավոր թեմաներից մեկը: Սակայն XIX դ. վերջերին ու XX դ. սկզբներին էր միայն, որ հիշողության սոցիալական հեռանկարը որոշակիորեն դարձավ եական:

«Կոլեկտիվ հիշողություն» եզրաբառի ժամանակակից օգտագործումների հետքերը տանում են դեպի Սորիս Գալբախս (1877-1945), որը 1925 թ. հրատարակեց իր ուղեմիջային «Հիշողության սոցիալական շրջանակները» ֆրանսերեն աշխատությունը: Գրքի հիմնական մասում քննարկվում է, թե ինչպես սոցիալական տարբեր հատվածներ՝ յուրաքանչյուրը տարբեր պատմական անցյալով, պետք է ունենան տարբեր հիշողություններ՝ կցված իրենց կյանքի համապատասխանաբար տարբեր շրջադարձային կետերին: Ավելի ուշ՝ 1950 թ. լույս տեսավ նրա «Կոլեկտիվ հիշողությունը» ֆրանսերեն աշխատությունը, որն անմիջապես թարգմանվեց եվրոպական մի քանի լեզուներով:

**§ 2.2. Հիշելու սոցիալական ենթատեքստը, հիմնարար հասկացությունները (Մ. Գալբախս և հետևորդներ):** Մեր հիշողությունը մեծապես ազդված է մեր սոցիալական շրջապատի կողմից: Մ. Գալբախսը կոլեկտիվ հիշողության մասին իր կոնցեպցիայում պնդում էր, որ անհատների համար որևէ այլ կապակցված և մնայուն ձևով հիշելն անհնարին է իրենց խմբային համատեքստից դուրս, որ «հասարակությունում է, որ նորմալ պարագաներում մարդիկ ձեռք են բերում իրենց հիշողությունները: Նույնպես և հասարակությունում է, որ նրանք վերհիշում են, ճանաչում են, ու տեղայնացնում են իրենց հիշողությունները» և, այդպիսով, դեպի անցյալի ուսումնասիրություն առաջին քայլերից մեկը հենց այն բանի գիտակցումն է, որ մեր հասարակական շրջապատը ազդեցություն է գործում մեր կողմից անցյալը հիշելու ձևերի վրա:

Ըստ Մ. Գալբախսի, հիշողության բնագավառում գատորոշվում են ինքնակենսագրական, պատմական, կոլեկտիվ հիշողությունը, պատմությունը: *Ինքնակենսագրական հիշողությունը* հիշողություն է այն իրադարձությունների մասին, որոնք արդյունք են մեր կենսափորձի: Մինչդեռ *պատմական հիշողությունը* այն հիշողությունն է, որ մեզ է հասնում միայն պատմական գրառումների միջոցով: *Պատմությունը* այն հիշվող անցյալն է, որի նկատմամբ մենք չունենք «օրգանական» հարաբերություն այն անցյալը, որն այլևս մեր կյանքի կարևոր մասը չէ, մինչդեռ *կոլեկտիվ հիշողությունը* ակտիվ անցյալն է, որը ձևավորում է մեր ինքնությունները: Հիշողությունն անխուսափելիորեն ճանապարհ է տալիս պատմությանը, երբ մենք կորցնում ենք կապը մեր անցյալների հետ: *Պատմական հիշողությունը*, բայց և այնպես, կարող է լինել կամ *օրգանական* կամ *մեռած*: մենք կարող ենք տոնել նույնիսկ այն, ինչն ուղղակիորեն չենք զգացել, ապրել, պահելով մեզ անցյալները մեզ համար կենդանի, կամ էլ այն կարող է կենդանի լինել միայն պատմական գրառումներում: Մ. Գալբախսի մեր ժամանակների մի շարք

հետևորդներ «կոլեկտիվ հիշողություն» հասկացության մեջ առաջարկում են որոշ այլ նրբերանգներ:

Մ. Գալբախսի համոզմամբ, «հասարակության հիշողությունն ետ է գնում միայն այնքան հեռու, որքան որ ի վիճակի է. այսինքն, այն այնքանով է ետ գնում, որքանով նրա բաղկացուցիչ խմբերի հիշողությունն է: Տեղեկատվության մեծ քանակություններ մոռացվում են ոչ թե չարությունից կամ դիտավորյալ, այլ պարզապես այն բանի պատճառով, որ այդ հիշողությունը կրող խմբերն անհետանում, դադարում են գոյություն ունենալուց»: Ինչպես մի խումբ ֆիզիկապես հաջորդում է մյուսին, նույն կերպ այն բերում է իր հետ նոր հիշողություններ, որոնք կամ հիմնվում կամ փոխարինում են հինն:

**§ 3. Կոլեկտիվ հիշողությունը անցյալի և ներկայի փոխհարաբերությունների համատեքստում:** Հասարակության անդամների համար միշտ էլ կարևոր են եղել անցյալի քաղաքական օգտագործումների, հիշողության կառավարման հարցերը: Այս հարցը մաս է կազմում շատ ավելի ընդհանրական, մեթոդաբանական բնույթ ունեցող մի հարցադրման, որն այսօր հիշողության տեսության մեջ ամենահաճախ շոշափվող, քննարկվող, վիճարկվող, կարծիքների բախման բերող ու, արդյունքում, առանձին ուղղությունների ձևավորման հանգեցրած հարցերից է: Հարցադրման էությունը կայանում է հետևյալում. պայմանականորեն «ներկայահեն» անվանվող հեղինակների մի մասի (Մ. Գալբախս, Ջ. Միդ, Է. Գոբսթաուն, Թ. Ռենցեր, Չ. Քուլի և այլք) համոզմամբ, անցյալը փոփոխական է, այն կերտվում ու վերակերտվում է ներկայի օգտագործման համար, ներկայի պահանջմունքներից ելնելով: Տեսաբանների մյուս՝ «անցյալահեն» խումբը (Մ. Մխուրան, Է. Շիլս և այլք) գտնում է, որ կոլեկտիվ հիշողությունները վերապրում են հասարակության ներսում տեղ գտած փոփոխությունները և ավելին, անցյալն է, որ ձևավորում է ներկայի մասին մեր պատկերացումները և ըմբռնումները, այլ ոչ հակառակը: Երրորդ ուղղությունը ներկայացնող գիտնականների խումբը (Բ. Շվարց, Է. Ջերոլբավել, Ջ. Օլիկ և այլք) գտնում է, որ մույն ներկան կարող է կրել տարբեր հիշողություններ և տարբեր ներկաներ կարող են կրել միևնույն հիշողությունը ու, այդպիսով, կոլեկտիվ հիշողությունը քաղաքական մշակույթի մեջ ժամանակի միջով ըմբացող քննարկումների դինամիկ, շարունակական գործընթաց է: Նկատենք, որ այս տեսական մոտեցումներից ոչ մեկն էլ մեղ կամ դոգմատիկ բնույթ չունի. նրանք տարբերվում են գլխավորապես շեշտադրումների առումով:

**§ 4. Կոլեկտիվ և պատմական հիշողությունը տարեդարձային բնույթի նշումներում, հիշատակումներում:** Անցյալի հիշողությունը գլխավորապես պահպանված է իրադարձությունների ընթացքի, պատմական անցքերի գրանցման միջոցով: Սակայն գրանցումների համար ընտրված իրադարձություններից ոչ բոլորն են հետագայում գնահատվել միատեսակ. դրանց մի մասի նկատմամբ մարդիկ, հասարակությունը մնացել է անտարբեր, մյուս իրադարձություններին անդրադարձ է եղել տարեդարձային բնույթի նշումներում, հիշատակումներում, այսինքն, դրանք օժտվել են արտակարգ նշանակությամբ ու նրանց են վերագրվել որակապես որոշակի տեղ, դիրք անցյալի մասին մեր ընկալումներում:

Կոլեկտիվ հիշողություն հասկացությունը բովանդակում է մի անցյալ, որը ոչ միայն ընդհանուր ձևով կիսվում է, այլ նաև *համատեղ* ձևով նշվում է: Այս կամ այն միջոցներով երաշխիքներ ստեղծելով, որ ողջ հասարակությունը *միասին*, որպես խումբ, կգա վերհիշելու իր անցյալը, հասարակությունն, այդպիսով, որոշակի ազդեցություն է գործում այն երևույթի տեղ գտնելուն, որը ենթադրում է ոչ միայն թե *ինչը և ում* ենք հիշում, բայց նաև *երբ* ենք այն հիշում:

Նկատենք, որ անցյալի վերաբերյալ մեր հիշողությունը կախված է ոչ միայն այն բանից, թե այն օբյեկտիվորեն ինչ է իրենից ներկայացնում, այլ որ դա սոցիալական երևույթ է և որ անցյալը դիտարկելու հետ կապված կարևոր փոփոխությունները սովորաբար սերտորեն առնչվում են գլխավոր սոցիալական փոփոխություններին, որոնք ազդում են ոչ միայն անհատներին, այլ նաև ողջ հուշային հանրությանը:

Այստեղ դիտարկվում է նաև պատմական ու կոլեկտիվ հիշողության մոբիլիզացիոն ներուժը և պարզաբանվում է, թե ինչու է քաղաքական վերնախավը ձգտում այն պահել իր վերահսկողության տակ, ծառայեցնել որոշակի քաղաքական շահերի:

**§ 5. Կոլեկտիվ հիշողության և պատմության փոխհարաբերության հարցեր:** Սոցիալական հիշողության ուսումնասիրությունների համար ամենավիճարկվող սահման է դիտվում դրա հարաբերությունը պատմագրությանը:

Հիշողության հարցերի խոշորագույն տեսաբաններից Մ. Գալբրախի համոզմամբ, պատմությունը սկսվում է այնտեղ, որտեղ վերջանում է կենդանի հիշողությունը: Նա շատ վճռական է այն դիտարկման մեջ, որ պատմությունը մեռած հիշողություն է, անցյալը պահպանելու մի ճանապարհ, դեպի որը մենք այլևս չունենք «օրգանական» փորձի վրա հիմնված, էմպիրիկ հարաբերություն: Մինճույն ժամանակ Մ. Գալբրախը գտնում է, որ պատմության նպատակներից մեկը պետք է լինի կամրջել անցյալի և ներկայի միջև եղած ճեղքվածքը, վերականգնելով այդ խզված շարունակականությունը:

Կոլեկտիվ հիշողությունը տարբերվում է պատմությունից նաև այն տեսանկյունից, որ պահում-պահպանում է անցյալից միայն այն, ինչը դեռևս ապրում է կամ ի վիճակի է ապրելու այն խմբերի գիտակցության մեջ, որոնք կենդանի են պահում այդ հիշողությունը: Եթե պատմությունը գրանցում է իրադարձությունները, ապա կոլեկտիվ հիշողությունը ավանդույթի պահեստարանն է: Նույնիսկ այն ժամանակ, երբ հասարակական ինստիտուտները արմատապես ձևափոխվում են (օրինակ, պատերազմներ կամ հեղափոխություններ), և հատկապես այդ ժամանակ, դրանք արմատակալմանը նպաստելու ամենալավ միջոցը նրանց օժանդակելն է, հենարան ստեղծելը այն ամենով, ինչը ենթակա է տեղափոխման ավանդույթից, այսինքն կտրուկ խզումը չի օժանդակում նոր երևույթների ամրապնդմանը հասարակության մեջ:

Հասարակության հիշողությունը ձգվում է այնքան, որքան որ տևում է հասարակությունը կազմող խմբերի հիշողությունը: Հիշողության հարցերով զբաղվող պատմաբանի համար կարևորը ոչ թե իրադարձության ուսումնասիրությունն է, այլ այդ իրադարձության վերհիշման գործընթացը:

**§ 6. Բանավոր պատմություններ և տրավմատիկ հիշողություն. փոխհարաբերության հարցեր:** Պատմության և հիշողության հարաբերությունների համատեքստում իր ուրույն տեղն ունի կենդանի մարդկանց հիշողությունների վերհանմամբ զբաղվող բանավոր պատմությունների ժանրը:

Բանավոր պատմությունն առաջին հերթին առաջարկում է հիշողության վավերացումը որպես *ավելի* ճշմարիտ և ավելի վստահելի, քան այլ գրանցումները. պատմողները գիտեն, թե ինչ է տեղի ունեցել, որովհետև նրանք եղել են այդտեղ իրադարձության(ուների) ժամանակ: Բայց հարցն էլ հենց այն է, որ ինչ-որ բանի հիշելը դրա հիշողությունը ճշմարտության որոշակի երաշխիք չէ. երբեմն մարդիկ հիշում են այնպիսի բաներ, որոնք երբեք չեն պատահել, կամ պատահել են այլ կերպ, ինչ նրանք հիշում են, սակայն դա բնավ չի նշանակում, որ նրանց հիշողությունները իրական չեն կամ անհարկի են, գործին չեն վերաբերում: Պատ-

մական վերլուծության թիրախը տեղաշարժվում, փոխվում է հիշողություն հասկացությունից՝ իբրև «ճշմարիտ» կամ «սխալ», դեպի հիշողության շեշտադրումը որպես գործընթաց՝ թե *ինչպես են* մարդիկ վերհիշում այն իրադարձությունները, որոնց մեջ նրանք ներգրավված են եղել կամ վկան են եղել, ինչ կարելի է սովորել, իմանալ նրանց պատմություններից:

Բանավոր պատմությունները հաճախ դժվար զանազանելի են տրավմատիկ բնույթի հիշողությունների ոլորտից: Ընդհանրապես հիշողության հարցերին նվիրված ուսումնասիրություններում «տրավման» դարձել է կենտրոնական եզրաբառերից մեկը: Տրավման պատասխան է ոչ այնքան իրադարձությանը, որքան որ իրադարձությանը տրվող իմաստին: Տրավմատիկ հիշողության բնութագրական հատկանիշները պարտադիր չէ, որ ունենան հատուկ հարաբերություն իրադարձության նկատմամբ, բայց կարող են դիտարկվել բնութագրելու համար հիշողության աշխատանքն ընդհանրապես: Տրավմատիկ հիշողության շուրջ քննարկումները մեծապես առնչվում են ցեղասպանությունների հետևանքներին՝ ինչպես վերապրողների հուշերում, նույնպես և մշակութային հիշողության մեջ ընդհանուր առմամբ, տրավմատիկ հիշողության հատկանիշների վերհանման հարցում մշակվել է անզան հատուկ հասկացություն, գիտական ուղղություն՝ հետտրավմատիկ սթրեսահեն խանգարում: Աշխատանքում դիտարկվում են տրավմայի դեմ պայքարելու միջոցները, հատկապես՝ դրա մասին պատմելը, ճշմարտության և հաշտության հանձնաժողովների գործունեությունը:

**§ 7. Հիշել, թե՛ մոռանալ «դժվար» անցյալը:** Վերջին տասնամյակում ոչ քիչ թվով տարբեր մակարդակի քաղաքական գործիչներ (ինչպես մեր ամնիջական հարևաններից, նույնպես և Արևմուտքից) հայերին խորհուրդ են տալիս մոռանալ, թոթափել անցյալի ծանր բեռը, հաշտվել անցյալի հետ, չվերադառնալ անցյալի դաժան իրադարձություններին ու այդ կերպ հնարավորություն ստեղծել առաջ գնալու համար:

Արդյո՞ք մեծ գնով հարաբերությունների բարելավումն է առաջընթացի միակ ճանապարհը հայերի համար: Նախ նկատենք, որ «անցյալի դաժան իրադարձություններ» (իմա՝ հայկական կոտորածներ, ցեղասպանություն, տեղահանություն, տարածական կորուստներ և այլն) որակվածը առանցքային նշանակություն ունի հայոց ինքնության կառուցվածքում, ինչը հստակ գիտակցվում է օտարների կողմից: Արդ, կա՞ն արդյոք ժողովուրդներ, որոնք հրաժարվում են իրենց ինքնության կարևորագույն մաս կազմող պատմական և կոլեկտիվ հիշողության տարրերից, ինչպիսիք էլ դրանք լինեն: Պարզվում է, որ ոչ: Պարզապես դեպքերի բերումով հայերի համար ճակատագիրն այնպես է դասավորվել, որ հենց ցեղասպանության հիշողությունն է դարձել մեր ինքնության, մեր կոլեկտիվ ու պատմական հիշողության կարևորագույն բաղադրիչը: Այդ հիշողությունը ցավի և կորստի հիշողություն է, որի չսպիանալուն օժանդակում է ինչպես միջազգային հանրության հիմնականում անտարբեր վերաբերմունքը, բայց ավելի շատ՝ ցեղասպանությունն իրականացրած պետության իրավահաջորդի կողմից դրա ժխտումը, ինչը ընկալվում է հավասարազոր երկրորդ ցեղասպանության:

Կոլեկտիվ և պատմական հիշողության ցավոտ էջերի (մանավանդ՝ ցեղասպանության մակարդակի) մեղմման մեկ քաղաքակիրթ ճանապարհ կա՝ անարդարություններ գործած կողմի համար դա մեղքի գիտակցումն է, ընդունումը և գանազան դրսևորումներ ունեցող փոխհատուցումը: Այս տեսանկյունից, իհարկե, նախ և առաջ ուսանելի է ետպատերազմյան Գերմանիայի փորձը, երբ երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող տասնամյակներին մարդկությունն ականատեսը եղավ կոլեկտիվ և պատմական հիշողության քննական

դիտարկման ու վերարժևորման հենքով գերմանական ինքնության ձևափոխմանը և, ի վերջո, ֆրանկո-գերմանական լիարժեք հաշտության կայացմանը, ինչի շնորհիվ էր մեծապես պայմանավորված միացյալ Եվրոպայի կայացման գործընթացը:

Ավելի լայն առումով սա նշանակում է, որ մերօրյա ազգային, էթնիկ և մշակութային կոնֆլիկտների լուծումն աներևակայելի է առանց գործիքի կամ բանալու դեր կատարող հիշողության օժանդակման՝ միայն ետ նայելով է, անցյալի հիշողությունից չիրաժարվելով է, որ կարելի մտածել ապագայի մասին ու առաջ շարժվել:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. 1915 Թ. ՑԵՂԱՍԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅՈՑ ԿՈՒԵԿՏԻԿ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԻՇՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

§ 1. «Արդար լուծեք Հայոց հարցը»: 1894-1922 թթ., ի հետևանք Օսմանյան, ապա և հանրապետական Թուրքիայի կողմից իրականացված հայկական ջարդերի ու ցեղասպանության, ոչնչացվեց շուրջ 2 մլն. հայություն, Արևմտյան Հայաստանը դատարկվեց հայերից, իսկ պետականությունը ստեղծվեց պատմական հայրենիքի տարածքի լոկ 1/10-ի վրա: Ի թիվս մարդկային ու տարածքային հսկայական ու անդառնալի կորուստների, հայ ժողովուրդը կորցրեց անգնահատելի մշակութային արժեքներ, ցրվեց աշխարհով մեկ, իսկ ապրած ողբերգությունը խոր հետք թողեց հայության հոգեբանական կերտվածքի վրա, բերեց կոլեկտիվ ու պատմական հիշողության մոր, հզոր շերտի առաջացման, որն աչքի է ընկնում խոր զգացմունքայնությամբ ու տևական ազդեցությամբ:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո եղեռնի մասին խոսակցություններն աստիճանաբար լռեցին: Սակայն ժամանակի ընթացքում, ներքաղաքական իրավիճակի փոփոխության, նաև գրականության միջոցով ցեղասպանության թեմայի շուրջ տեղ գտած որոշակի ազատախոհության հետևանքով էր թերևս, որ 1965 թ. ապրիլի 24-ին, ցեղասպանության 50-ամյակի նշման ժամանակ, Երևանում տեղի ունեցան զանգվածային ելույթներ: Այդ ելույթները, ինչպես և դրանց նախորդող ու հաջորդող՝ գրականության ու արվեստի մեջ ցեղասպանության թեմայի նկատմամբ հետաքրքրության կտրուկ աճը վկայում են, որ ցեղասպանության հիշողությունը, չնայած այն լռության մատնելու պաշտոնական քաղաքականությանը, շարունակում էր ապրել մարդկանց հոգիներում և գիտակցության մեջ: Սակայն այդ հիշողության մեջ հայերը բացառապես ներկայացվում էին որպես անմեղ զոհ, որը կորցրել է իր պատմական հայրենիքի մեծ մասը և կարիք է զգում կարեկցանքի. ազգային-ազատագրական պայքարի, ֆիդայական կռիվների հերոսների, ինչպես նաև անկախ պետականության թեմայի առանց կապանքների, ազատ արժարժունը գաղափարախոսական առումով շարունակում էր մնալ չհայտարարված արգելանք:

Հայաստանի ղեկավարության և մտավորականության համատեղ ջանքերի շնորհիվ 1964-65 թթ. ընդունվեցին ԽՍՀՄ և ՀԿԿ Կենտկոմի որոշումներ «առաջին համաշխարհային պատերազմում զոհված հայ մահատակներին նվիրված կոթողի» կառուցման վերաբերյալ:

Այսինքն, 1965-67 թթ. Երևանում, Ծիծեռնակաբերդի բարձունքին կառուցված Ցեղասպանության զոհերի հուշարձանային համալիրը, այսպես թե այնպես, տեղավորվում է հուշային բնույթի՝ հենց այդ տարիներին սկսված կառուցումների շարքում: 1968 ապրիլի 24-ին ժողովուրդը դուրս եկավ ոչ թե մայրաքաղաքի կենտրոնական փողոցներն ու իրապարակները, այլ կազմակերպված շա-

րայուններով շարժվեց դեպի քաղաքի ծայրամասը, որպեսզի ծաղիկներ ու ծաղկեպսակներ դնի ցեղասպանության զոհերի հուշարձանին: 1970-ականների կեսերից այդ երթերը փաստորեն զլխավորում էին Հայաստանի կոմկուսի և կառավարության ղեկավարները, ովքեր վաղ առավոտյան առաջին ծաղկեպսակն էին դնում հուշարձանին, դրանով իսկ (ինչպես նաև Լուսիայի րոպեով) պետական հնչեղություն տալով Մեծ եղեռնի զոհերի հիշատակի սգատոմին: Այդ երթերը ևս էին ուղեկցվում ցուցապատումներով, չնայած ծաղկեպսակներն ունեին սգո ժապավեններ՝ ստանդարտ գրություններով, ձևավորված «եղեռնի զոհերին + կազմակերպության անունը» բանաձևով:

§ 2. *Եղեռնի զոհերի հուշարձանը՝ հայ ժողովրդի հուշային ծխակարգի համակարգում*: Տարաբնույթ նյութերի քննությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ հայոց մեջ գերեզմանոցներն ավանդաբար, որպես կանոն, տեղակայված էին լինում կամ բնակավայրի կենտրոնում (եկեղեցու մերձակայք), կամ դրա մի ծայրին, նույնիսկ որոշ հեռավորության վրա, սակայն, որպես օրինաչափություն բարձունքին: Այս ավանդույթը, որոշ ոչ էական փոփոխություններով, շարունակվեց նաև խորհրդային տարիներին, երբ գերեզմանոցային գործառույթները որոշ չափով փոխանցվեցին հուշային ֆունկցիա իրականացնող կառույցներին: Այս տեսանկյունից ատենախոսության դիտարկվող հատվածում համեմատություններ են անցկացվում Հայրենական մեծ պատերազմին և արցախյան ազատամարտին հաջորդող տարիներին Հայաստանում կառուցված զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանների և գերեզմանոցների ֆունկցիաների միջև: Այդ համատեքստում նկատվում է, որ բնավ էլ զարմանալի չէ, նույնիսկ օրինաչափ է, որ Ցեղասպանության զոհերի հուշահամալիրը կառուցվեց Ծիծեռնակաբերդի բարձունքի վրա, ուր դեռևս 1920-ական թթ.-երին, ինչպես և հուշարձանի կառուցման աշխատանքների ընթացքում, հայտնաբերվել են ուշ բրոնզի դարի դամբարաններ, իսկ ինքը կառույցը դիտվում էր որպես 1,5 մլն. զոհերի դամբարան ու գերեզման:

Ատենախոսությունում մանրամասնորեն դիտարկվում են կառուցվածքային նմանությունները Ցեղասպանության զոհերի հուշահամալիր այցելության ու կատարվող ծեսերի և հայ ավանդության թաղման արարողությունների, գերեզմանոցային գործառույթների միջև: Նյութի համակողմանի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ Ցեղասպանության զոհերի հուշահամալիրի նկատմամբ առկա վերաբերմունքում, նաև ամենամյա քայլերթերում միավորվում են հիշողությունն ու ազգային ծխակարգը՝ վերածվելով նախնիների պաշտամունքի յուրատեսակ դրսևորման:

§ 3. *Ծաղկեպսակ-ցուցապատումներ*: 1988 թ. փետրվարի հայերի սուհ-գայիթյան ջարդերից հետո, ցեղասպանության թեման կրկին ուժգնորեն հիշեցրեց իր մասին: Եթե նախորդ տարիների ապրիլի 24-ին ծաղկեպսակ էին դրվում լոկ սահմանափակ թվով կազմակերպությունների անունից, ապա այս անգամ, պայմանավորված, թերևս, փետրվարյան հանրահավաքների ցուցապատումային վերելքի փաստով՝ ծաղկեպսակներն ամհամեմատ ավելի շատ էին, աչքի էին ընկնում բազմազանությամբ ու ավելի ճոխ ձևավորմամբ:

Եղեռնի զոհերի հուշարձանին դրվող ծաղկեպսակներն իրենց հուշային գործառույթն իրականացնում էին ինչպես ծաղիկների դաշտի համապատասխան ձևավորմամբ, նույնպես և ժապավենային գրություններով: Նման ծաղկեպսակներն ունեին տարբեր գեղարվեստական լուծումներ: Ստանդարտ ձևավորումներից գատ հանդիպում էին ծաղկեպսակներ հայ ինքնության խորհրդանիշերով, ինչպես օրինակ Մասիսների ուրվապատկերով (Երևույթի համահայկական ընդգրկման մատնանշում), նաև համակցված աղավմու հետ (բիրլիական անցյալ),

«1915» գրությանը (ցեղասպանության խորհրդանիշ), խաչի (քրիստոնեական հավատք) և հայկական եռագույն դրոշի (պետականություն) պատկերներով և այլն: Ատենախոսությունում դրանցից յուրաքանչյուրը դիտարկվում է ժամանակային ու թեմատիկ իր համատեքստում: Եթե ծաղկեպսակի ծաղկային ձևավորումն «ապահովում էր» ծաղկեպսակ-«ցուցապաստառի» պլակատային մասը, ապա ծաղկեպսակի սգո ժապավենը, կարելի է ասել, ցուցում էր նրա տրանսպարանտային գործառույթը: Ժապավենների վրա հանդիպող գրություններում «հետադարձ հասցեն» հաճախ կրում է թաքնված իմաստ, որը հասկանալի է դառնում հայ ժողովրդի պատմության ընդհանուր համատեքստում միայն: Նշված հանգամանքը ատենախոսությունում պարզաբանված է մի քանի բնութագրական օրինակներով:

Ծաղկեպսակների ժապավեններին առկա «հետադարձ հասցեն» ուսումնասիրողների համար ծառայում է երկրի քաղաքական և սոցիալական կառուցվածքի փոփոխության ակնառու ցուցիչ, ինչն ատենախոսությունում մանրամասն ներկայացված է:

Եղեռնի զոհերի հուշահամալիրը Հայաստանի միակ տարածքն է, որտեղ տարին մեկ անգամ «ներկա» ստանալու հնարավորություն են ունենում քաղաքական, տնտեսական, հասարակական, մշակութային տարաբնույթ կազմակերպություններ: Սակայն քանի որ «ներկա» ստացողների թիվը բավականին մեծ է, ուստի և, իրենց առկայությունը մեծապես կարևորողների համար, էական են դառնում աչքի զարնելու ձևերի որոնումները: Նման պարագաներում հարցը լուծվում է, որպես կանոն, ծաղկեպսակների ծավալների չափով, ինչը նույնպես դիտարկված է համապատասխան օրինակներով:

Ատենախոսությունում հանգամանորեն վերլուծվում է, թե ինչպես է ծաղկեպսակը կրում ցուցապաստառի գործառույթը: Ծաղկեպսակների բովանդակային բնությունը ցույց է տալիս, որ դրանք կարող են նույնքան տեղեկատու լինել ինչպես գեղարվեստական ձևավորումների, այնպես էլ՝ ժապավենային գրությունների միջոցով՝ բառային մակարդակով: Ծաղկեպսակները՝ ցուցապաստառների նման, արտացոլում են ժողովրդական զանգվածների մեջ առկա ընդհանուր մտայնությունները և ապրում են էվոլյուցիա, ինչը ցուցիչ է ծառայում ոչ միայն քաղաքական իրավիճակի փոփոխության, այլև ինքնության ձևափոխման:

§ 4. «**Հայ դատ**»: 1988 թ. ապրիլի 24-ի ցուցապաստառների թվում էին «հայ դատ», «հայերի դատ» բառակապակցության օգտագործումով ստեղծված տրանսպարանտներ, որտեղ առաջարկվում էր հենց եղեռնի զոհերի հիշատակի օրը դիտել որպես Հայ դատի օր («Ապրիլի 24-ը՝ հայ դատի օր» և այլն), իսկ մեկ տարի անց՝ ի զարգացումն այս թեզի, ցուցարարները առաջարկում էին «Ապրիլի 24-ը դարձնել եղեռնագործության դեմ պայքարի միջազգային օր»: Այսինքն, եթե 1988-ին առաջարկվում էր զուտ ազգային ուղղվածությամբ գործողություն, ապա մեկ տարի անց արդեն ոչ հայազգիներին էլ էր առաջարկվում Հայոց եղեռնի զոհերի հիշատակի օրը դիտարկել որպես ժողովուրդների հետ պատահած նույնատիպ հանցագործությունների զոհերի հիշատակի օր:

Եվ կարծես թե ի շարունակումն վերոնշյալի գաղափարախոսության, 1990 թ. ապրիլի 24-ին հայտնվեցին տրանսպարանտներ Հայաստանի եզրիական ու ատրակյան համայնքների կողմից: Եթե դրանցից մեկը՝ «Եզրիները ձեզ հետ են և կիսում են ձեր վիշտը, հայեր» արտացոլում էր Հայաստանի տարածքում բնակվող ամենաբազմամարդ ազգային փոքրամասնության համերաշխությունը, ապա մյուս երկուսը՝ «God bless the first Christians – Assyrians and Armenians», «1915 թ. очердной геноцид ассирийцев и армян» ցուցում էին երկու հարևան ժողովուրդների պատմական ճակատագրերի ողբերգական էջերի ընդհանրությունը:

§ 5. **Մեջբերումներ**: Հնագույն ժամանակներից ի վեր մարդիկ իրենց բանավոր կամ գրավոր խոսքն ավելի հիմնավոր դարձնելու համար մեջբերումներ են անում անցյալի մեծերի, հեղինակությունների ստեղծագործություններից ու մտքերից կամ պարզապես՝ ժողովրդական իմաստախոսության շտեմարանից: Դարաբաղյան շարժման տարիներին ևս վերոհիշյալ սկզբունքը լայն կիրառություն գտավ, դրսևորվելով ոչ միայն բանավոր ելույթներում ու կոչերում, այլ նաև ցուցապաստառներում: Շարժման ժամանակ մեջբերումներին անդրադառնալը տեղ էր գտնում նաև այլ կերպ, ինչպես, օրինակ՝ մեկ ուրիշ նպատակով ասված խոսքից մեջբերում էին անում շեշտելու լրիվ ուրիշ միտք, քիչ չէին նաև արհեստական «մեջբերումային» հորինվածքներ և այլն:

Ցեղասպանության թեմային առնչվող ցուցապաստառներում տեղ գտած մեջբերումները կարելի է, թերևս, բաժանել երկու մասի: Առաջին խումբը կազմում են հայ պոեզիայի տարբեր ստեղծագործություններից արված մեջբերումները: Երկրորդ, ավելի ստվար խումբը կազմված է ինչպես գրական-գեղարվեստական, բայց առավելապես հասարակական-քաղաքական հնչողություն ունեցող ստեղծագործություններից, այնպես էլ առանձին ելույթներից, մասնում տեղ գտած հողվածները:

Ատենախոսության մեջ այս հարցը մանրամասնորեն լուսաբանված է Ա. Ահարոնյանին պատկանող «Այսքան չարիք թե՛ մոռանան մեր որդիք, / Թող որջ աշխարհի հային կարդայ նախատիճք...» տողերի խմբագրված տարբերակներով ստեղծված ցուցապաստառների օրինակով, Պ. Սևակի «Ամմահները հրամայում են» ժողովածուում տեղ գտած բանաստեղծությունների մոտիվներով ստեղծված «Նահատակները հրամայում են» տրանսպարանտի դիտարկմամբ, Ա. Ֆրանսի «Հայերի դատը մարդկության դատն է» ասույթի հենքով:

§ 6. «**Քար աշխարհ**»: Ի՞նչ կարող էին հրամայել Մեծ եղեռնի «նահատակները»: Երևի թե, առաջին հերթին, իրենց չմոռանալը: 1988 թվականին մոռացումը կանխելու կարևորագույն միջոց էր համարվում ցեղասպանությանը գնահատական տալը, ինչն էլ, իր հերթին, հանգեցնում էր ցեղասպանության պաշտոնական ճանաչման հարցին: Եվ ծնվեցին տասնյակ ցուցապաստառներ, որոնց տեքստերը ցուցում էին հասցեատերերի՝ ում դիմում էին ցուցարարները՝ աստիճանակարգը, ինչպես նաև նպատակին հասնելու միջոցների մասին պատկերացումների էվոլյուցիան: Դրանց մի մասն ընդհանրապես չունեին հասցեատերեր («Ծանաչել 1915 թ. Մեծ եղեռնը» և այլն), մի մասն ուներ անորոշ հասցեատերեր («Պահանջում ենք պետականորեն ճանաչել 1915 թ. հայերի ցեղասպանությունը» և այլն), մի մասի հասցեատերերը իրավաբանորեն սխալ էին («Պահանջենք, որ ՍՍՀՄ կառավարությունը ընդունի 1915 թ. ցեղասպանությունը» և այլն), մի ուրիշ մասին էլ՝ ճիշտ («Պահանջում ենք խՍՀՄ Գերագույն խորհրդից ճանաչել հայոց ցեղասպանությունը» և այլն): Կարելի է ասել, որ հասցեատերերի որոշակիության աստիճանը հստականում էր ժողովրդի իրավական կրթական մակարդակի բարձրացմանը զուգահեռ: Այս շարքի ցուցապաստառների դիտարկումը ակնառու կերպով ցույց է տալիս պահանջների ներկայացման ձևերի փոփոխության, ինչը նշանակում է ժողովրդի քաղաքական մշակույթի, ու այդ թվում նաև ինքնության տարրերի փոփոխության գործընթացը: Դրանք նաև ցուցում են, թե ինչպես է ցեղասպանության հավաքական հիշողությունը հանդես գալիս որպես քաղաքական-մշակութային գործընթացի մաս:

Քանի որ խՍՀՄ, իսկ գրեթե մեկ տարի շարունակ էլ Հայաստանի իշխանությունները չէին շտապում ճանաչել հայերի ցեղասպանության փաստը, մարդիկ դիմում էին նաև միջազգային բարձրագույն աստիճանին՝ ՄԱԿ-ին («We appeal to

United Nations to accept the Armenian Genocide»), մարդկությանն ընդհանրապես («Геноцид армян – преступление перед человечеством» և այլն), աշխարհին («Ի՞նչ է պատահել Երկիր, ձեռք մեկնիր փոքր ազգին», «Աշխարհ, հայոց եղեռնը քո խղճի փորձությունն է»), դատապարտում էին անտարբերությունը, համարում էին այն չարիք («Безразличие – преступление», «Քար աշխարհ»), դիմում էին բարձրալին («Տեր Աստված, պատժում ես մեզ՝ չգործած մեղքերի համար. Կոմիտաս): Կոմիտասին վերագրվող այս խոսքերը յուրատեսակ արտացոլում են արխեպիսկոպոսի այն մտածողության, որ մարդու, մարդկանց խմբի, ժողովրդի հետ պատահած դժբախտություններն իրականում տարաբնույթ մեղքերի համար Աստծո ուղարկած պատժի դրսևորումներ են:

Արդ, ի՞նչ իրատեսական կամ սիմվոլիկ ելքեր էին առաջարկում մարդիկ իրենց ստեղծած ցուցապաստառներով: Նախ, որպես կարևորագույն պայման, շիրագյան տողերի միջոցով դրվում էր ցեղասպանությունը չմոռանալու խնդիրը («Չայ կոտորածներն ով մտքից հանի / Նա է թշնամին նոր Հայաստանի»): Առաջ էր քաշվում նաև ցեղասպանությունն իրականացնողների նկատմամբ պատժի գաղափարը, ինչի մասին վկայում է «Եղեռնի կազմակերպիչներին ոչ՝ մի ներում!» տրանսպարանտը: Ցեղասպանությունը չըմդունողների նկատմամբ առաջարկվում էր կիրառել սկզբունքային մոտեցում՝ «Ցեղասպանություն չըմդունող ցեղասպանության մասնակից է»: Մեկ այլ ձևակերպմամբ տրանսպարանտ՝ «Ցեղասպանությունը վաղեմության ժամկետ չունի», կարծես թե ուզում էր ասել ցեղասպանությունը ընդունել չցանկացողներին՝ միևնույն է, ցեղասպանության այսօր չճանաչումը որևէ նշանակություն չունի, քանի որ որպես մարդկության դեմ գործած հանցագործություն, այն վաղեմության ժամկետ չունի:

#### ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ՍՈՒՄԱԳԱՅԻԹՅԱՆ ԶԱՐԴԵՐԻ ԵՎ ՄԵԾ ԵՂԵՐՆԻ ԺՈՂՈՎՐԿԱԿԱՆ ՀԱՍՎԳԻՌԻԹՅՈՒՆՆԵՐԸ

1988 թ. փետրվարի 27-29-ին, խորհրդային գործադրությունների առկայության պայմաններում, Սուևգայիթում տեղի ունեցան զանգվածային անկարգություններ, որոնց ընթացքում սպանվեցին պաշտոնական տվյալներով՝ «հայ ազգության 26 քաղաքացի»: Սուևգայիթում հայերի կոտորածը ԽՍՀՄ դատախազության կողմից որակվեց որպես «խուլիգանական տարրերի գործողություններ», «սպանություններ խուլիգանական բնույթի մղումներից»: Մինչդեռ, ինչի մասին վկայում են բազմաթիվ փաստեր, հայերի ջարդերը կազմակերպված էին նախօրոք և իրականացվում էին որոշակի պլանի համաձայն:

Սուևգայիթյան ջարդերը, ինչպես շատերը համարում են, պաշտոնական Ադրբեջանի արձագանքն էր Լեռնային Ղարաբաղի և Հայկական ԽՍՀ-ի բնակչության խաղաղ և ձևով ժողովրդավարական կամքի արտահայտությանը՝ ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելու մասին: Հանցագործության նպատակն էր շրջափակել խնդրի հնարավոր լուծումը, ահաբեկել հայերին ու, մասնավորապես, միութենական իշխանություններին նոր արյունահեղ գործողությունների հեռանկարով և հարկադրել նրանց հրաժարվելու Ղարաբաղի հարցի արդարացի լուծումից:

§ 1. **Սուևգայիթի զոհերի հիշատակի հետ կապված սզո երթեր:** Այս հատվածում ցույց են տրվում սուևգայիթյան ռժրագործության զոհերի հիշատակի հարգման ժողովրդական եղանակները: Նշվում է, որ 1989 թ. փետրվարի 28-ից հետո Սուևգայիթի զոհերի հիշատակը դադարեցին զանգվածային ձևով մշելը: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ ժողովրդի ավանդական գիտակցության մեջ մեկ տարի անց նոր, XX դարավերջի կոտորածների զոհերը ամբողջությամբ

«ծուլվեցին» հին, XX դարասկզբի ցեղասպանության զոհերին: Նմանապես և հանգուցյալը հայերի մեջ նրա մահվան առաջին տարվա ընթացքում հիշվում է որոշակի ժամանակ միայն՝ յոթերորդ, քառասուներորդ օրերը, տարին, իսկ հետագայում նա հիշվում է միայն բոլոր հանգուցյալների ավանդաբար հիշատակի օրեր համարվող օրերին՝ մեռելոցներին: Հանգուցյալի «անհատական» հիշատակի օրերը մշվում են միայն նրա ընտանիքի մեղ շրջանակում: Նույն կերպ և փետրվարի 27-29-ը մեր օրերում մշվում է գերազանցապես նախկին սուևգայիթցիների և Ադրբեջանից փախստականների լոկ մի քանի տասնյակ հոգիանոց խմբերի դեպի Ծիծեռնակաբերդի բարձունք ուղղված երթերով միայն:

§ 2. **Սուևգայիթը Մեծ եղեռնի շարունակությունն է:** Սուևգայիթյան ջարդերի և 1915 թ. ցեղասպանության համադրության շուրջ առաջին արձագանքների մեջ էին ցուցապաստառային ձևակերպումները: Նման բնույթի ցուցապաստառների շարքում առաջիններից էին 1988 թ. մարտի 8-ին հայ կանանց կողմից տարվող պակաստները: Դրանցից մեկում «1915» գրություն ունեցող եղեռնի զոհերի հուշարձանի պատկերին կից նկարված էր այդ նույն հուշարձանի փոքր չափերի, պառկած եռանկյունի հիշեցնող ոչ ամբողջական հատվածը, որի տակ գրված էր «1988», այդպիսով կարծես ցանկանալով ցուցել, որ նոր ցեղասպանությունը նախորդի ավելի փոքր մասշտաբներով շարունակությունն է: 1988 թ. ապրիլքսանչորսյան երթում սուևգայիթյան իրադարձությունների որպես Մեծ եղեռնի շարունակություն ընկալումը զանգվածաբար դրսևորվում էր տասնյակ կազմակերպությունների անուկից բերված ծաղկեպսակների սզո ժապավեններում, որոնք ուղղված էին ինչպես 1915 թ., այնպես էլ Սուևգայիթի զոհերի հիշատակին: Այդ օրվա տրանսպարանտների մի մասը պարզապես արձանագրում էին այդ երևույթների նույնությունը («События в Сумгаите – продолжение геноцида 1915 г.», «Սուևգայիթը Մեծ եղեռնի շարունակությունն է» և այլն), մյուսները նման շարունակականության բացատրություններ էին առաջարկում («Нежелание признать геноцид 1915 г. привело к геноциду 1988 г.», «Եթե ՍՄՀՄ կառավարության կողմից ճանաչվեր 1915 թ. ցեղասպանությունը՝ 1988 թ. Սուևգայիթը չէր լինի», «Մարդկությունը պարտավոր է ճանաչել 1915 թ. ցեղասպանության փաստը, որ չկրկնվեն Սուևգայիթները»), և մի խումբ կոչ էր անում 1915 և 1988 թթ. իրադարձությունները ճանաչել որպես ցեղասպանություն («1915, 1988 թթ. ճանաչել ցեղասպանություն» և այլն): Ցուցապաստառային ձևակերպումները նաև վկայում են, որ Սուևգայիթ քաղաքի անվանումը արդեն 1988 թ. ապրիլին ձեռք էր բերել «ցեղասպանություն» հասկացությանը համագոր նշանակություն:

§ 3. **Ցեղասպանությունների շարքեր. կոլեկտիվ և պատմական հիշողությունը տարբերվում ու տեղանուններում:** Անցյալի վերհիշման գործընթացում մարդիկ հաճախ մտովի ճանփորդություններ են կատարում դեպի ոչ հեռավոր (ծնողներից, տատիկ-պապիկներից լսած, ֆիլմերում տեսած, դասագրքերից ու գեղարվեստական գրականությունից ծանոթ) պատմական անցյալ, որոնում համեմատություններ ու հենց *համեմատությունների* միջոցով է, որ իրադարձությունն ավելի հասկանալի, մատչելի, ընկալելի է դառնում: Պատմական համեմատությունները ներկայացվում են պարզ թվարկումների ձևով: Ներկայացման նման ձևը մի կողմից վկայում է հայոց պատմության հատկապես վերջին շրջանի ողբերգական իրադարձությունների շուրջ բավարար գիտելիքների մասին, ինչն էլ «թեթևացնում է» ցուցապաստառների համառոտության սկզբունքին հետևող հեղինակների՝ մարդկանց պատմական հիշողությանը դիմելու գործը, մյուս կողմից դրսևորում է հանդիսանում թվարկելով՝ արձանագրելու արխեպիսկոպոսի մտածողության:

§ 3.1. **1895-1909-1915-1918-1919-1921-1922:** Այստեղ մանրամասնորեն դիտարկվում է մեր կողմից պայմանականորեն «ցեղասպանությունների շարք» հասկացությամբ առանձնացվող ու որոշակի կառուցվածք ունեցող պլակատների համար, մեր կարծիքով, նախօրինակ ծառայող մեկ ցուցապատատ: Այլ վերնագրված է. «*The Armenian Massacres from Sultan Abdul Hamid to Mustafa Kemal Pasha 1895 – 300.000 – In Turkish Armenia. 1909 – 30.000 – In Cilicia. 1915 – 1.500.000 – In Turkish Armenia, Kars, Alexandrapol. 1918 – 30.000 – In Baku. 1919 – 10.000 – In Kumjular. 1921 – 20.000 – In Hajun. 1922 – 10.000 – In Izmir*»: Ցուցակի ներքո պատկերված թուրք մարդասպանին կանգնեցնում է «*USSR (Russia)*» գրությամբ հագուստ կրող և նորաստեղծ ԽՍՀՄ-ը խորհրդանշող կիմք, որն իր պաշտպանության տակ է վերցրել հայ որբուկին, որը կրում է «*Armenia*» մակագրությամբ ցցցոտիներ: Այս ամենի տակը մակագրված է՝ «*A Friend at Last*»: Այս պլակատը հայտնի է հայաստանյան հասարակությանը 1965 թ.-ից ի վեր՝ Ա. Մնացականյանի «*Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ*» աշխատությունում տեղ գտնելու շնորհիվ:

Պլակատի հանգամանակի, լայն պատմական հենքով քննարկումը բերում է մի շարք եզրահանգումների, այդ թվում դրա հեղինակների, բովանդակության վերաբերյալ: Մասնավորապես նկատվում է, որ պլակատի գաղափարախոսական հատվածում (որբերի երկիր Հայաստանին վերջնական ոչնչացումից փրկում է Ռուսաստանը) առաջարկվող մտայնությունը միակն էր խորհրդային շրջանի հայ պատմագրության մեջ և գաղափարախոսական նոր կլիշեներով շարունակում էր հայության ավելի քան երկուհարյուրամյա ընկալումները օտարների լծից ազատագրման հարցում Ռուսաստանի դերի շուրջ: Վիճակն սկսեց աստիճանաբար փոխվել Ղարաբաղյան շարժման ձևավորումից ի վեր, ինչի դրսևորումներից մեկն էլ այն է, որ Հայաստանում Շարժման պատկերագրության մեջ (սկզբնական շրջանի մեկ-երկու բացառություններով) բացակայում է օտարագրի փրկարարի, ազատարարի կերպարը, իսկ նման հարց ծագելու պարագայում այդ գործառույթը վերագրվում է հենց հայ ժողովրդին: Ինչպես այս, նույնպես և կառուցվածքային նման սկզբունքով ստեղծված Ղարաբաղյան շարժման պատկերագրության մեջ շեշտվում է հայերի տված զոհերի թեման: Այս տիպի լուծմամբ պլակատներում գրեթե իսպառ բացակայում է ազգային-ազատագրական պայքարի թեմատիկան:

§ 3.2. «*Բաբու – 1918, Շուշի – 1920, Սումգայիթ – 1988*»: Ղարաբաղյան շարժման ու հետագա տարիներին հայաստանյան հասարակությունը, հայ ժողովուրդը Սումգայիթում, ապա և Բաբվում, Ադրբեջանի մյուս հայաբնակ վայրերում 1988-1990 թթ. տեղ գտած հայերի կոտորածներին ու բռնագաղթերն ընկալում էր իբրև հայության, նրա մի հատվածի դեմ իրականացված ցեղասպանություն, մանավանդ, որ բռնությունների մեթոդիկան գրեթե նույնությամբ կրկնում էր XIX դարավերջին և XX դարասկզբին իրականացված կոտորածների ու ցեղասպանության ձևերը:

Ցուցապատառների դիտարկվող դասի մեջ, որտեղ իմաստային բովանդակությունն արտածվում է ենթատեքստից, Սումգայիթը կամ այդտեղ կատարված իրադարձությունների տարեթիվը՝ 1988, տեղադրվում է արդեն իսկ հայտնի ցեղասպանությունների շարքում, ինչպես օրինակ. «*Տեր-Ջոր – Սումգայիթ / ոճիրի համար վճիռ*», «*Դեյր-Յոր Бухенвальд Сумгаит*»: Վերջին պարագայում փորձ է արվում ցուցել, որ ադրբեջանցիների կողմից Սումգայիթում իրականացված ջարդերը հայերը դիտում են նույն հարթության վրա, ինչ թուրքերի կողմից 1915 թ. իրականացված հայերի ցեղասպանությունը և գերմանական ֆաշիստների կողմից

համակենտրոնացման ճամբարներում կազմակերպած տարբեր ազգության միլիոնավոր մարդկանց ոչնչացումը:

«Ցեղասպանությունների շարքի» գաղափարը պատկերային (համակցված թվայինի հետ) առունով ընդհանրապես փոխանցվում է երկու ձևերով՝ ցեղասպանության զոհերի սխեմատիկ պատկերներով և քարտեզների միջոցով: Ցեղասպանությունների շարքերը կողավորող տարեթվերով ու տեղանուններով տրանսպարանտների շարքում են նաև այնպիսիք, որոնցում խորհրդային տարիներն ընդհանուր առմամբ կամ ստալինյան ռեժիմի ժամանակ իրականացված զանգվածային բռնությունները (1937, 1949) նույնպես ներառվում են ցեղասպանություն ընկալման մեջ, ինչպես օրինակ. «... 1915 ... 1988 ... *Մինչև երբ*», «1915 ... 1937 ... 1949 ... 1988», «*Դեր-Ջոր, Ալթայ, Սումգայիթ...*»: Իսկ «*Պանթուրիզմ Դեր-Էլ-Ջոր / Ստալինիզմ Ալթայ / ???-իզմ Սումգայիթ*» տրանսպարանտում ցեղասպանությունների շարքի յուրաքանչյուր ցեղասպանություն բացատրվում է համապատասխան պետական գաղափարախոսությամբ, ու այդ կերպ է ակնարկվում Սումգայիթում կատարվածի գաղափարական հիմքը:

Քարտեզները ոչ միայն հենք էին ծառայում, այլև հաճախ իրենք էին կրում հիմնական իմաստային ծանրաբեռնվածությունը՝ հետևողականորեն իրականացվող ցեղասպանությունների գաղափարը ներկայացնելու համար: Առեմախոսությունում հանգամանակի ձևով քննարկվում են «քարտեզային» մտածողության կանոններով ստեղծված մի շարք պլակատներ: Դրանցից մեկն ուղեկցվում է «*Բաբու 1918 30000, Շուշի 1920 20000, Սումգայիթ 1988 ?, Խոջալու 1988 ?*» տեքստով, որը ևս մանրամասնորեն լուսաբանված է:

Ցեղասպանությունների շարքի «դասական» ցուցապատառի օրինակ է 1988 թ. հունիսի 15-ին օգտագործված, Պ. Սևակի «Անլուելի զանգակատուն» պոեմի տողերի հենքով ստեղծված հետևյալ բովանդակությամբ պլակատը. «... *Обезглавили турки целый народ. Хотели оставить одного армянина, и то... для музея...*»: Տեքստայինից զատ, դիտարկվող պլակատն ունի շարունակություն, որը կարծես ասվածի պատկերային և թվային-տեղանքային հաստատումն է և դրա շնորհիվ է մեր կողմից որակվում իբրև «դասական» դիտարկվող շարքի համար. տեքստի տակ առկա մասը բաժանված է երեք հատվածի, որոնցից մեկում նշված են հայկական կոտորածների իրականացման տարեթվեր, այնուհետև թուրքական յաթաղան է պատկերված ու նշված է այդ յաթաղանի զոհ մարդկանց քանակը և այն բնակավայրի անունը, որտեղ իրականացվել է ցեղասպանությունը՝ «*1895-96 500000, 1915 1500000, 1918 (Бакы) 30000, 1920 (Шуши) 35000, 1988 (Сумгаит) 26...?*»: Առեմախոսությունում լայն պատմա-ազգագրական հենքի վրա մանրամասնորեն հետազոտվում է «մեջբերումային» մտածողության սկզբունքով ստեղծված այս ցուցապատառային տեքստը, նշվում են դրա ակունքները, ժողովրդական հնարավոր ընկալումներն ու մեկնաբանումները, ներկայացվում են ցուցապատառներում շեշտված ձևով փոքրատառի օգտագործման պատճառաբանումները:

Նույնպես լայն պատմական հենքի ներկայացմամբ, հանգամանորեն անդրադառնալով ցուցապատառներում ներկայացված տեղանուններին ու տարեթվերին, մանրամասնորեն դիտարկված են «*սումգայիթ շարունակությունն է 1915 թ. եղեռնի, 1920 թ. բաբվի և Շուշիի կոտորածների*», «*Բաբու – 1918, Շուշի – 1920, Սումգայիթ – 1988*», «*Ցեղասպանություն. Բաբու, Շուշի, Նախիջևան, Արցախ, Սումգայիթ, Սասիս, Խոջալու*», «*Վան... Բիթլիս... Էրզրում... 1915 Ван ... Битлис ... Эрзерум ... 75 – Մեծ եղեռն – Սումգայիթ... Գանձակ... Բաբու... 1990 Сумгаит ... Гандзак ... Бакы...*» և այլ նման կառուցվածք ու բովանդակություն ունե-

ցող ցուցապատումները: Բնութագրական է, որ ցեղասպանությունների շարքն օգտագործող ցուցապատումներում երբեմն կարող է բացակայել 1915 թ. ցեղասպանության հիշատակությունը, ինչպես որ է վերջին երկու տրանսպարանտներում:

Այսպիսով, Ղարաբաղյան շարժման տարիների ցուցապատումներում արտացոլված է XIX դարավերջի - XX դարի հայերի ցեղասպանության, կոտորածների ու ջարդերի գրեթե ողջ ներկայակերպ, ինչը վկայում է նաև, որ դրանք XX դարավերջի հայության պատմական ու կուլեկտիվ տրավմատիկ երանգներ ունեցող հիշողության նկատելի մասն են կազմում: Այս գլխի նյութերը մեկ անգամ ևս վկայում են, որ ցուցապատումների միջոցով վեր հանող հայոց էթնոպատմությունը, պատմական և կուլեկտիվ հիշողությունը հենված է մարդկանց գիտելիքներին և վերաբերմունքին իրենց ազգի իրական կամ պատկերացրած պատմական անցյալի ամբողջական կամ առանձին դրվագների շուրջ: Միևնույն ժամանակ այդ հիշողությունները, ինչպես տեսանք, ստատիկ երևույթներ չեն, այլ ենթակա են ձևափոխումների, որոնք կարող են լինել ինչպես ներքին գարգացումների արդյունք, այնպես և արտաքին ազդեցությունների հետևանք: Ղարաբաղյան շարժման տարիներին, երբ հայ հանրության կյանքում տեղ գտան համազգային նշանակության իրադարձություններ, գործեց վերոնշյալ գործոնների համակցումը, ինչը և հանգեցրեց նոր ինքնության կարևոր տարրերի ստեղծման:

XIX դարավերջի - XX դարասկզբի ցեղասպանության ու կոտորածների թեմայի նշանակալի առկայությունը հայոց պատմական և կուլեկտիվ հիշողության մեջ պատճառաբանված է նաև սուվզայիթյան ջարդերի փաստով և ցուցում է հայերի նկատմամբ արյունալի բռնությունների շարունակականության, դրանց միջև ասես զենետիկ կապի առկայության գաղափարը: Ուստի պատմական չէ, որ սուվզայիթյան ոճրագործությունները հեշտությամբ ընկալվում էին իբրև Օսմանյան կայսրության ժամանակներից սկսած հայերի նկատմամբ կիրառվող ցեղասպանության քաղաքականության ընդհանուր շղթայի օղակներից մեկը:

#### ԳՆՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ. ԿՈՆԵԿՏԻՎ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՈՂԲԻ ՈՒ ԳՈՒՋԱԿԱՆ ԲԱՆԱԶԵՎՈՒՄՆԵՐՈՒՄ

Իրենց հետ պատահած դժբախտության նկատմամբ միայն զուտ զգացմունքային անդրադարձից հետո է, որ մարդիկ ի վիճակի են լինում դրանք ամբողջությամբ գիտակցել և ըմբռնել, հասկանալ, գտնել ու վերլուծել տեղի ունեցածի պատճառները: Նման իրավիճակի դրսևորումները բազմաթիվ էին նաև սուվզայիթյան ողբերգությունից հետո:

Սուվզայիթյան ոճրագործությունների ցուցապատառային առաջին արձագանքները հուզական, զգացմունքային բնույթի էին: Դրանց մի մասին բնորոշ էր սգին յուրահատուկ տարրերի առկայությունը («*Բողոքս սզո երթի՛ Ղարաբաղի, Սուվզայիթի և այլուր զոհված հայերի սզո հիշատակին*», «*Ереван страдает и скорбует*», «*Թալիհնի կանայք ապրում են հայոց վշտով*»): Այստեղ փաստորեն համերաշխություն է հայտնվում ոչ միայն հայաստանյան բնակավայր-տարածաշրջանի, այլ հայության ենթաէթնիկ փոքրամասնության մակարդակով: Ընդ որում, եթե համեմատության կարգով, օրինակ, այլէթնիկ ընդհանրության ներկայացուցիչները *կիսում են* «եղբայր» հայ ժողովրդի վիշտը («*Եզդիները ձեզ հետ են և կիսում են ձեր վիշտը, հայեր*») ապա թալիհնի հայուհիները *ապրում են* իրենց ժողովրդի վշտով, այսինքն ցուցապատառի լեզուն կարող է յուրահատուկ էթնիկ ցուցիչ դեր կատարել:

Եվ այնուամենայնիվ, 1988 թ. ապրիլի 24-ին այն մտայնությունը կար, որ «*Վշտի պահին ամենամութ / Միայնակ ես, / Գայ ժողովուրդ*»: 1988-89 թթ. տրանսպարանտներում սզո թեման առավել լայն դրսևորում ուներ Պարույր Սևակի գրչին պատկանող «*Դե ե՛կ, Վարդապետ, / Ու մի՛ խենթանա...*» տողերի միջոցով՝ մեջբերված նրա «Անլուծելի զանգակատուն» պոեմից: Ատենախոսությունում մանրամասն վերլուծվում են սևակյան տողերը, պատմական լայն հենքի վրա մեկնաբանվում է, թե ինչու հենց այս ստեղծագործության հիշյալ կրկնատողն ունեցավ տրանսպարանտային լայն դրսևորում:

Սուվզայիթյան կոտորածների առաջին արձագանքները նաև հիշատակի կոչող էին և, որ բնորոշ է հայ ինքնությանը, իրենց ազդեցիկությամբ ուղղված էին ոչ թե դեպի դուրս, այլ դեպի իր հասարակության ներսը: Դեպի ներս, ինքն իր մեջ ուղղվածությունը ինչ-որ իմաստով դրսևորվում էր սևակյան մեկ այլ մեջբերման մեջ, որը հաճախ էր հանդիպում 1988-89 թթ. տրանսպարանտներում. դա «*Բեկանեն շանթեր*» կարգախոս-կրկնատողն է Պարույր Սևակի «եռածայն պատարագ» պոեմից, որը ցուցապատումներում օգտագործվում է այդ նույն պոեմի երկու այլ կրկնատողի՝ «*Ողբան մեռելոց*» և «*Կոչեն սպորդաց*» պարտադիր հարևանությամբ: Պ. Սևակի պոեմի երեք մասերի այս հաջորդականությունը, ըստ էության, ընդհանրական իմաստ ունեցող հայկական ողբերգության պատմերման համար. մեռածների հիշատակը, ցասումը մարդկային պատմության մեծագույն չարագործություններից մեկի հանդեպ չէր կարող չզուգակցվել կյանքի շարունակության ու հարատևման հոգսերի հետ:

Վշտի, սգի, ողբի տարրեր պարունակող ցուցապատումներին զուգահեռ տեղի ունեցածին զգացմունքային անդրադարձը, զնահատականը դրսևորվում էր նաև *ամոթանք* տալու բնույթ ունեցող ցուցապատումների միջոցով: Տաքսոնոմետրիկ առաջին կտրվածքում ամոթանք էր տրվում սուվզայիթյան ցեղասպանությունն ուղղակիորեն իրականացնողներին՝ «*Սոզոր Գալաչամ Սյւմգայտ*»: Գալաչորդ աստիճանին էր գտնվում խորհրդային պետությունը, այն պետությունը, որի քարոզչությունը տասնամյակներ շարունակ իր երկրի քաղաքացիներին փորձում էր ներարկել ինտերնացիոնալիզմի ոգին, խոսում էր ժողովուրդների անխախտ բարեկամության մասին. «*Սյւմգայտ – սոզոր СССР*», «*Սուվզայիթ, խոջալու – ամոթ իՍՄՄ-ին*»: Տաքսոնոմետրիկ մյուս աստիճանին է ժամանակը, ընդ որում՝ քաղաքակրթության բարձրագույն վերելքը խորհրդանշող ժամանակաշրջանը՝ XX դարը. «*Սոզոր սյւմգայտիկ արման – սոզոր XX դար*!», «*Սյւմգայտ – սոզոր XX դար*», ապա գալիս էր աշխարհի մարդկությունը՝ «*Սուվզայիթը մարդկության խայտառակությունն է*», մասնավորապես, մարդկությունից ակնկալվող ամենակարևոր բաներից մեկը՝ արդարությունը: Վերջին համագամանքով է, թերևս, պայմանավորված Ղարաբաղյան շարժման տարիներին լայն տարածում ունեցող, Սիամանթոյի «Պարը» բանաստեղծությունից մի մեջբերմանը՝ «*Ով մարդկային արդարություն, թող ես թքենե՛ք քու ճակատիդ*» տրանսպարանտների հեղինակների կողմից հաճախակի անդրադարձը: Ցուցապատառային այս տեքստը նույնպես համագամակալ կերպով հետազոտված է ատենախոսության չորրորդ գլխում, նշված են դրա իրական ու գրական զուգահեռները, ինչը թույլ է տալիս եզրակացնելու, որ դիտարկվող մեջբերման առկայությունը ցուցապատումներում թերևս պայմանավորված էր ոչ միայն դրա՝ հասարակության լայն շրջանակներում հայտնի լինելու, այլև դարասկզբի ու դարավերջի իրադարձությունների միջև մարդկանց կողմից սյուժետային մամուլային նկատելու, գիտակցելու համագամանքով:

Նկատենք, որ Պ. Սևակի «Դե եկ, Վարդապետ...» կրկնատողի մամուլային դրսևորումը, Սիամանթոյի հիշյալ տողը ևս Շարժման ընթացքում հանդիպում էր գա-

նագան տարբերակներով, ինչի պատճառը թերևս այն է, որ տրանսպարանտներ կազմողները, երբեմն, ըստ երևույթին, պարզապես ծանոթ չէին սկզբնաղբյուրին, և կամ չէին դիմում դրան, այլ գրում էին հիշողությամբ կամ էլ ինչ-որ մեկից լսած լինելով, ինչը, իր հերթին, մեջբերումների ժողովրդական բանահյուսական ստեղծագործության բնույթ ստացած լինելը է վկայում:

**ՉԼՈՒԽ ՅԻՆԳԵՐՈՐԴ. ՍՈՒՄԳԱՅԻԹՅԱՆ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ԲԱՑԱՐԱՅՑՄԱՆ, ՍԱՏԱՐՄԱՆ ԵՎ ՊԱՏԺԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ**

§ 1. *Չրապարակայնություն. հայկական տարբերակ:* Ղարաբաղյան շարժման սկզբնական փուլում բարեփոխումների քաղաքականության նկատմամբ ժողովրդական վերաբերմունքի առաջին դրսևորումները խիստ դրական էին: Բայցևայնպես զգացվում էր այդ վերաբերմունքի որոշակի ուղղվածությունը, այն է՝ *վերակառուցման քաղաքականության համատեքստում հենց Ղարաբաղյան հարցի լուծումը որպես փորձաքար դիտարկելը և այդ կերպ դրականորեն լուծելու հնարավորության նկատմամբ հավատը:*

Չրապարակայնության քաղաքականության նկատմամբ հավատի սասանումը սկսվեց 1988 թ. փետրվարյան հանրահավաքների սկզբից բառացիորեն մեկ-երկու օր անց, պայմանավորված միութենական մամուլի և հեռուստատեսության աշառու տեղեկատվությամբ ու որակումներով («группа людей», «экстремистски настроенные лица» և այլն): Յետևեցին բողոքի ցույցեր: Մարդկանց ձեռքերին հետևյալ բովանդակությամբ տրանսպարանտներ էին. «*Весь народ не может быть экстремистами*», «*Армяне не экстремисты! Экстремисты не мы*», «*Мы не группа, мы народ!*» և այլն: Մամուլի դեմ ուղղված բողոքի ալիքն առաջին հերթին ուղղվեց «Պրավդա»-ի և «Վրեմյա» լրատվական հեռուստատեղադրի դեմ: Մամուլի օրգանները որակվում էին իբրև ոչ ճշմարիտ տեղեկատվություն հաղորդող, ստախոս, ծախու, քննադատվում էր «զլասնոստի» քաղաքականության կենսագործման կերպը. այս ամենը մանրամասնորեն լուսաբանված է առեմախտության մեջ:

Ահա այս իրավիճակում էր, որ առաջ եկան այլընտրանքային լրատվամիջոցներ: Դրանք համակարգչային եղանակով շարված և երբեմն էլ քսերոքսով բազմացրած տեքստեր էին՝ «Информационный бюллетень»-ներ, ուր ներկայացվում էին հանրահավաքներում հնչած ելույթների հիմնական բովանդակությունը, վերջին տվյալները ղարաբաղյան իրադարձությունների մասին, այլ լուրեր:

Սուսման իրադարձությունների գնահատականի պահանջով ստեղծված ցուցապաստառների մեջ առաջին հերթին առանձնանում են *Ճշմարտացի և ամբողջական տեղեկատվություն պահանջող* պաստառները, ինչը ևս արձագանք էր խորհրդային մամուլի և հեռուստատեսության ներկայացրած կիսատ-պռատ, ճշմարտությունը կոծկելու ցանկությամբ աչքի ընկնող տեղեկատվությանը: Ղարաբաղյան շարժման ողջ ընթացքում մարդիկ պահանջում էին Սուսման իրադարձությունները կատարվածին տալ գնահատական և, հատկապես՝ *քաղաքական գնահատական*, իսկ դրա բացակայության դեպքում՝ իրենք էին տալիս այդ գնահատականը: Սա շատ էական հանգամանք է և չեչտում է Շարժման նպատակներից մեկը՝ քաղաքական ճանապարհներով հարցի լուծմանը հասնելու անհրաժեշտությունը: Նկատենք, որ *քաղաքական գնահատականի* պահանջն առաջին պլան սկսվեց մղվել 1988 թ. նոյեմբերից սկսած, այսինքն այն պահից, երբ Շարժումը թևակոխում էր իր առավել արմատական, հասարակության կյանքում

քաղաքական բնույթի փոփոխությունների անհրաժեշտության գաղափարի հասունացման փուլը: Քաղաքական գնահատականի պահանջը ուղեկցվում էր սուսման գայիթյան իրադարձությունների «ցեղասպանություն» որակավորմամբ: Նշենք, որ Ղարաբաղյան շարժման մեջ նման գնահատականն առաջին անգամ հանդես է եկել հենց ցուցապաստառներում՝ հատուկեմտ ձևով արդեն 1988 թ. մարտի 8-ին, գանգվածային ապրիլի 24-ին («*Мы требуем признать геноцид в Сумгаите и наши права беженцев!*», «*Верховный Совет должен признать геноцид в Сумгаите*» և այլն): Ստեմախտության այս հատվածում հանգամանորեն լուսաբանված են նման պահանջների, նաև քաղաքական գնահատականի բացակայության առթիվ առկա ժողովրդական ընկալումները, համեմատություններն ու մեկնաբանումները, ինչը ցուցում է մտածելակերպի փոփոխության գործընթաց:

§ 2. *Խորհրդային զորամիավորումների նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունն իբրև ինքնության ձևափոխման ցուցիչ:* Ինքնության ձևափոխման վրա ազդող գործոնների թվում կարևորագույն տեղ ունեն քաղաքական ու ռազմական ակցիաները, մասնավորապես, քաղաքական գործիչների հայտարարություններն ու զինված ուժերի տարաբնույթ գործողությունները: Այդպիսի հանգամանքներով պայմանավորված ինքնության փոփոխությունները հատկապես պարզորոշ են դրսևորվում և ունենում են, որպես կանոն, համեմատաբար արագ ընթացք հասարակության համար ծգնաժամային իրավիճակներում, որպիսին էր, օրինակ, Ղարաբաղյան շարժումը:

Եթե շուրջ 300 տարվա պատմություն ունի հայոց ռուսական կողմնորոշումը, ապա ավելի քան 150 տարվա՝ ռուս զինվորի փրկարար դերի մասին պատկերացումների համակարգի ձևավորումը: Տարաբնույթ նյութերի քննությամբ, նաև պատմական լայն հենքի վրա առեմախտության այս բաժնում հանգամանորեն լուսաբանվում է մարդկանց վերաբերմունքի ու գնահատականների՝ զգացմունքային ու ինչն էլ կայուն ու արմատական, փոփոխության գործընթացը՝ «ռուս ազատարար և մարդասեր զինվորի» կերպարի նկատմամբ: Պայմանավորված խորհրդային զորամիավորումների գործողություններով, վերջիններս սկսում են դիտարկվել մարդասպանների, ֆաշիստների հետ համեմատության համատեքստում: Չայաստանցիների գնահատականները հաճախ դուրս էին գալիս Չայաստանի սահմաններից ու արծարծում էին ավելի լայն ընդգրկմամբ հարցեր: Մասնավորապես, մի ամբողջ շարք ցուցապաստառներում անդրադարձ էր կատարվում այն իրողությանը, որ ԽՍՀՄ-ը աստիճանաբար վեր է ածվում զինված ուժերին հենված բռնապետության, իսկ խորհրդային զորամիավորումները սկսում են դիտարկվել որպես ԽՍՀՄ-ում ժողովրդավարական զարգացումների խոչընդոտ և ձևավորվող բռնապետության գլխավոր հենարան ու գործիչ: Արդյունքում խորհրդային բանակի ու դրա հիմքը կազմող ռուս զինվորի առաջադեմ ու փրկարար դերի մասին կարծրատիպը փոխվում է այն աստիճան, որ խնդիր է դրվում «*Ետ կանչել խորհրդային բանակում ծառայող հայորդիներին, որպեսզի նրանք ծառայությունը շարունակեն Խորհրդային Չայաստանում*» և հատուկանում է հայկական բանակ ստեղծելու անհրաժեշտության գաղափարը:

§ 3. «*Արժանի պատիժ Սուսման իրադարձություններին*». սուսման իրադարձություններն անմիջականորեն իրականացնողների և կազմակերպիչների բացահայտում և պատժում: Բնութագրական է, որ սուսման կոտորածներին հաջորդող ինչպես բանավոր, նույնպես և ցուցապաստառային գնահատականներում պահանջվում էր ոչ թե վրեժ լուծել հանցագործներից, հաշվեհարդար տեսնել նրանց հետ, այլ նրանց նկատմամբ իրականացնել «արդարություն», «դատ», «պատիժ», «խստագույն պատիժ», այսինքն առաջ է քաշվում սուսման իրա-

յան իրադարձությունները «հրահրողներին» և «մանկասպաններին» *օրինական ճանապարհով պատժելու* գաղափարը: Այս խմբի ցուցապատառների ժամանակագրորեն հաջորդող խմբում ևս «մահապատիժ» առաջարկվում է «դահիճների» նկատմամբ, «պատասխանատվության կանչել»-ը՝ «ցեղասպանության կազմակերպիչներին», այսինքն՝ կրկին էթնիկ պահը չի դրվում պատժելու գաղափարի հիմքում: Անգամ Բաքվի 1990 թ. հունվարյան դեպքերից հետո, որի արդյունքում հայության հերթական ջարդերի զոհ դարձան շուրջ 400 մարդ, հայերը ոչ թե վրեժի էին կրչու, այլ պահանջում էին *պատասխանատվության ենթարկել* մարդասպաններին ու ջարդարարներին: Այս շատ կարևոր պահ է, որովհետև իրենով կանխորոշում է տուճալիքային հանցագործություններն անմիջականորեն իրականացնողների և կազմակերպիչների բացահայտման և պատժի հիմնական, ուղենիշային, հանգրվանային մեթոդները:

1988 թ. մայիսին էլ հայտնվեց, կարելի է ասել, մարգարեական, հաջորդող ժամանակահատվածում ռեալություն դարձած կանխատեսումը՝ «*Безнаказанность организованных погромов рождает новые погромы*»: Հիշենք, որ սուղգայիքյան իրադարձություններից հաջորդեցին ազգամիջյան բռնությունների հողի վրա տեղ գտած դեպքերը Կիրովաբադում, Ֆերգանայում, Նոր Ուզնեում, Օշում, Բաքվում, Դուշանբեում: Ցուցապատառում արտահայտված միտքը հնչում էր հանրահավաքներում, ասվում զանազան մեծ ու փոքր ամբիոններից, սակայն համապատասխան արձագանք չէր գտնում ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության կողմից:

§ 4. «*Մոսկվա→Բաքու→Սուճալիք*». *խորհրդային հիմնական պարադիգմների փորձությունը և ձևափոխումը*: Սուճալիքյան հանցագործություններն անմիջականորեն իրականացնողների և կազմակերպիչների բացահայտման և պատժի պահանջից գատ, մարդիկ իրենք էին ցուցում հնարավոր մեղավորներին: Ընդ որում, այս հարցի շուրջ առկա պատկերացումների բավականին լայն դաշտը ժամանակի ընթացքում արմատական ձևափոխումներ կրեց, ինչը հետևանք էր առաջին հերթին իրադարձությունների ընթացքի, ինչպես նաև դրանց արդյունքում մարդկանց քաղաքական գիտակցության մակարդակի բարձրացման: Այս գործընթացը շատ լավ է երևում հենց ցուցապատառային նյութով: Այսպես, 1988 թ. ապրիլի 24-ի ցուցապատառներից մեկը նշում էր, որ «*Враги нестройники – организаторы Сумгаита*», մեկ այլ տրանսպարանտ կրկին գաղափարախոսական, սակայն որակապես այլ բնույթի թշնամիների էր մատնացույց անում՝ «*Геноцид Сумгаита – испытанная тактика пантюркизма*», կամ դրա աղբրեջանական տարբերակը՝ «*Геноцид в Сумгаите – преступление азербайджанского пантюркизма*», «*Ապրիլի 24*», «*Սուճալիք*», «*Բաքու*» նույն ձեռագիրն է:

Քանի որ խորհրդային ղեկավարությունը սուճալիքյան ոճրագործություններին չէր շտապում քաղաքական գնահատական տալ, ավելին՝ այն ներկայացնում էր իբրև «խուլիգանական դրդումներով» պայմանավորված զանգվածային անկարգությունների արդյունք, մարդկանց կողմից արվում էր նաև տրամաբանորեն հաջորդող, ընդհանրական բնույթի եզրակացությունը. քաղաքական հովանավորությունն իրականացնող մարմինը՝ ԽՍՀՄ-ը նկատի ունենալով նշվում էր, որ «*Государство несет ответственность за трагедию Сумгаита*», «*Հանցագործին հովանավորողը հանցագործ է*» կամ «*Ցեղասպանություն չընդունողը՝ ցեղասպանության մասնակից է*» և այլն: Կառուցվածքային կապից գատ այս տեքստերում նկատվում է նաև մտածելակերպի ձևափոխման գործընթաց. եթե 1988 թ. ապրիլին երկրի ղեկավարությունը նույնացվում էր ընդամենը հանցագործի հետ, ապա նույնքերի երկրորդ կեսին այն դիտվում էր իբրև «մարդկության դեմ գործած ոճրագործության»՝ ցեղասպանության մեղսակից:

Ատենախոսության այս հատվածում հանգամանորեն քննվում է, թե ինչպիսի ձևափոխումների ենթարկվեց հայ-աղբրեջանական բարեկամության ժողովրդական ընկալումների համակարգը: Բնութագրական է, որ փոխհարաբերությունների անկյունաքարում դրվում էր ոչ թե էթնիկ տարբերակումը, այլ աղբրեջանական կողմի հանցագործություն կատարած լինելու հանգամանքը («*Братство доказывается делом, а не кровью*», «*Истинная дружба народов – равенство и взаимное уважение*», «*Политическая оценка сумгаитских зверств – залог добрососедства*» և այլն): Ժողովրդական գնահատականներով հարուստ և լայն քննարկման առարկա դարձավ հայ-ռուսական բարեկամության: Մասնավորապես, 1988 երկրորդ կեսից ռուս զինվորները ներկայացվում էին իբրև աղբրեջանցիներին՝ ընդդեմ հայերի օժանդակողներ: Այդ մտայնության ցուցապատառային դրսևորումներից մեկը «*Մշտական բարեկամները*» «*մշտական թշնամիների*» հովանավորությանը *իրականացնում են հայերի բնաջնջումը*» 1988 թ. նույնքերյան տրանսպարանտային տեքստն էր, արտածված Օպերայի հրապարակում նույն տարվա ամառվանից հնչող լույսերից: Այս պլակատն իր նման գնահատականներով միակը չէր: Այսպես, նույնքերյան մեկ այլ տրանսպարանտ, որպես արձագանք Կենտրոնի գործողություններին նշում էր, որ «*Сумгаитский геноцид – интернационализм Кремля*» կամ «*Награда за армянскую кровь – орден Дружбы народов?*» և այլն: Սուճալիքյան հանցագործությունների անմիջական իրականացման և կազմակերպման հնարավոր մեղավորների թվում *Կենտրոնի դերի ժողովրդական պատկերագիր գնահատականներում օգտագործում էին նաև էլ ավելի բաց որակումներ*: Դրանցում Կենտրոնը ներկայացվում էր հազվադեպ առանձին, ավելի հաճախ՝ Աղբրեջանի և աղբրեջանցիների հետ սերտ համագործակցության ենթատեքստում: Այսպես, 1988 թ. աշնանը արձանագրվեցին բազմաթիվ ցուցապատառներ, որտեղ ուղղակիորեն Կենտրոնն էր մեղավորվում աղբրեջանցիների կողմից հայության նկատմամբ կիրառվող բռնություններում («*Մոսկվան հովանավորում է աղբրեջանցի-թուրք ոճրագործներին*», «*Кто стоит за палачами сумгаита???*», «*За спиной сумгаитских палачей стоит Москва*», «*Սուճալիքի ակունքները փնտրել Մոսկվայում*» և այլն): Արտացոլելով մարդկանց մտածելակերպում տեղ գտած փոփոխությունները, ցուցապատառների մի խումբ ուղղակիորեն մեղադրում էր ԽՍՀՄ-ին ու նրա ղեկավար մարմիններին ու անձանց («*Сумгаит – ум, честь и совесть ЦК КПСС*», «*Սուճալիքը ԽՍՀՄ-ի խիղճն ու պատիվն է. 1915 – 1500000 – Թալեաթ, 1988 - ? - Ալին, 1990 - ? - Մ. Գ. [իմա՝ Սիխալի Գորբաչով]*», «*Жертвы Баку на совести Горбачева*» և այլն):

§ 5. «*Սուճալիքյան խեղկատակավարություն*». *սուճալիքյան ոճրագործությունների մասնակիցների նկատմամբ տարվող դատավարության գնահատական*: Ատենախոսության այս հատվածում հանգամանորեն դիտարկվում է մարդկանց վերաբերմունքը 1988-89 թթ. ընթացող դատավարությունների նկատմամբ, ինչպես նաև այդ հարցի շուրջն առկա պատկերացումների ձևափոխման և, դրանով իսկ, ինքնուրույն ձևափոխման գործընթացը: Սուճալիքյան ոճրագործությունների մասնակիցների նկատմամբ տարվող 1988 թ. մայիսյան դատավարության գնահատականի առթիվ մեջտեղ եկած ցուցապատառներից մի քանիսը, ասես արտահայտելով մարդկանց առաջին ռեակցիան կատարվող անարդարության դեմ, պարզապես ընդհանուր ամոթանք էին տալիս դատավարությանը, ինչպես նաև մատնացույց էին անում բարոյական բնույթի գնահատականներ հասցեատերերին «*Ամոթ, Позор, Shame*», «*Ամոթ Սուճալիքի դատախաղին*» և այլն: Ամոթանք տալու պատճառն այն էր, որ հայտնի էր դարձել, որ սուճալիքյան հանցագործությունները չէին դիտարկվում համակցության կարգով, իսկ ջարդարար-

ները մեղադրվում էին ընդամենը «խուլիգանական դրդումներով» սպանություն կատարելու մեջ (*«Преднамеренный погром не путать с хулиганскими побуждениями»*, «Սոււմգայիթի դահիճներին՝ մահապատիժ» և այլն):

Արդ, ի՞նչ էր առաջարկվում ստեղծված վիճակից դուրս գալու համար: Այսպես, արդեն մայիսին կոչ էր արվում արդարադատության ազատ գործունեության հնարավորություն ստեղծել՝ «Свобода правосудию», քանի որ այն համոզմունքն էր առկա, որ դատարանի նկատմամբ քաղաքական և այլ բնույթի ճնշում է գործադրվում: Սեկ այլ տրանսպարանտում դատավարությունը որակվում էր որպես «խեղկատակություն» և առաջարկվում էր դադարեցնել այն՝ «Прекратить судебный фарс»: Արվում էր նաև տրամաբանորեն հաջորդող եզրակացությունը՝ «Սոււմգայիթի դատավարությունը հանձնել միջազգային դատարան»:

Դիտարկվող թեմայի շրջանակներում ցուցապաստառների նոր ալիքը բարձրացավ 1988 թ. նոյեմբերին, պայմանավորված Սոււմգայիթի քաղաքային և ԽՍՀՄ գերագույն դատարանում (Մոսկվա) ընթացած դատավարությամբ: Ենթադրվում էր, թե մոսկովյան դատավարությունը լինելու է ամենաարդարը (չէ որ Միության գերագույն դատարանում էր ընթանում), սակայն մարդկանց սպասելիքներն այնպես էլ չիրականացան: Դատավարության թեմային առնչվող 1988 թ. աշնանային ցուցապաստառների մի մասը կոչ էր անում ոճրագործների նկատմամբ իրականացնել արդարացի դատ (*«Требуем справедливого суда сумгаитских событий»*, «Պահանջում ենք արդարացի դատ Սոււմգայիթի ոճրագործների հանդեպ» և այլն): Սակայն քանի որ չէին տրվում այն զնահատականները, որոնք, մարդկանց կարծիքով, արտացոլում էին ռեալ իրականությունը, այդ պատճառով էլ դատավարությունն արժանանում էր հետևյալ տիպի գնահատականներին՝ «Սոււմգայիթյան խեղկալոյտակոտություն», «Սոււմգայիթը եղեռն է, դատավարությունը՝ խեղկատակություն», «Միջազգային խեղկատակադատավարություն», «Сумгаитский процесс – пародия справедливости», «Դա՛տ ԽՍՀՄ գերագույն դատարանում, թ՞ե խեղկատակություն», «Մոսկովյան դատավարությունը պղծում է Սոււմգայիթի հայ զոհերի հիշատակը» և այլն: Այս պայմաններում կրկին, ինչպես որ մայիսին էր, առաջ էր քաշվում միջազգային դատարանին դիմելու անհրաժեշտության գաղափարը՝ «Սոււմգայիթյան եղեռնագործներին միջազգային դատարան», «Միջազգային դատաստան սոււմգայիթի ոճրագործներին»: Այս նշանակում էր, որ բացակայում էր հավատը խորհրդային դատական համակարգի օբյեկտիվ, քաղաքականապես անկախ ու անկաշառ լինելու հնարավորության շուրջ:

#### ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ. ԱՆՑՅԱԼԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԻ ՎԵՐԱԳՆԱԴՅԱՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԴՅՅՈՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ղարաբաղյան շարժման տարիներին ցեղասպանության թեմային այս կամ այն կերպ առնչվող շուրջ 370 ցուցապաստառների բավականին սովոր մասեր, որպես կանոն, երևան էին գալիս ամեն տարվա ապրիլի 24-ին, իսկ 1989 թ. նաև փետրվարի 28-ին՝ սոււմգայիթյան ցեղասպանության առաջին տարեդարձին: Միայն այդ օրերին, տարբեր աղբյուրների համադրմամբ, արձանագրվել է շուրջ 250 ցուցապաստառ և նման գործառույթ իրականացնող ծաղկեպսակ, այդ թվում միայն ցեղասպանության թեմային առնչվող՝ գրեթե 200 ցուցապաստառ: Այս նյութի թուղթի դիտարկումն անգամ ցույց է տալիս, թե ինչպես տարեցտարի փոխվում է ցուցապաստառային տեքստերի բնույթը՝ խնդրողական երանգներ ունեցող, արդարություն, ցեղասպանության ճանաչում, արդարացի դատ պահանջող տեքս-

տերն իրենց տեղը զիջում են վերջնական եզրակացության բնույթ ունեցող՝ պայքարի ու զենքի դիմելու անհրաժեշտությունը մատնացույց անող, անկախության վերականգման կոչող, ցեղասպանության պատճառների և պատասխանատուների մասին պատկերացումների փոփոխություն արձանագրող տեքստերին:

§ 1. «Ձարթիր, լատ...»: Ղարաբաղյան շարժման տարիներին, որպես կանոն, ինչ-ինչ երևույթների շուրջ գերիշխող մեկնաբանությունների և ընկալումների շարքում միշտ էլ հանդես էին գալիս գաղափարներ, որոնք միայն ժամանակ անց էին դառնում հոգեհարազատ մարդկանց շատ ավելի մեծ զանգվածներին: Այդպիսի գաղափարների թվին էին պատկանում նաև հետևյալ երկուսը, որոնք տեղ էին գտել տրանսպարանտներին և իրենց ի հայտ գալու ժամանակ՝ 1988 թ. ապրիլի 24-ին, իրավիճակային բոլորովին այլ լուծում էին առաջարկում՝ «Չույսներս մեզ վրա, հայեր» և «Մեր միակ պաշտպանը մենք ենք»: Որպեսզի այս տեքստերում արտահայտված գաղափարը դառնար ժողովրդական զանգվածների մտածելակերպի հիմնական, ուղենիշային բանաձևը՝ անհրաժեշտ եղան իրադարձություններով հագեցած ամիսներ: 1988 թ. նոյեմբերին արդեն մարդկանց ձեռքին հայտնվեցին «Ձարթիր, լատ, մըռնիմ քըզի», «Որտեղ զենք, այնտեղ հարթանակ» տրանսպարանտները, որոնք ցուցում էին սեփական ուժերով նպատակների իրագործմանը հասնելու հին գործելակերպի նորովի ընկալվող ճանապարհը: Եվ քանի որ քաղաքական խաղաղ պայքարը չէր բերում ցանկալի արդյունքների, կոչ էր արվում դիմել պայքարի այլ միջոցների, մասնավորապես՝ զինված պայքարի: Այդ կոչերը այս կամ այն կերպ հնչում էին նաև 1989 թ. ապրիլ-քսանչորսյան երկու տրանսպարանտներում՝ «Ոչ լացել է պետք, ոչ հուսահատվել, / Չայի պայքարը կա ու կլինի...», «24 апреля – день памяти и единения к борьбе!»:

§ 2. Պատմության դրվագների վերագնահատում: Ցեղասպանության պատճառների և իրականացման հարցի առնչությամբ 1989 թ. վերագնահատման գործընթաց էին ապրում նաև հայ-ռուսական հարաբերությունների և Չայաստանում խորհրդային կարգերի հաստատման փաստերը: Նկատենք, որ այս թեմաներով մեջտեղ եկած տրանսպարանտները ստեղծված էին, թերևս, Ազգային ինքնորոշում միավորում կազմակերպության կողմից, որն իր գերագույն նպատակն էր համարում Չայաստանի անկախության ձեռքբերումը: Անկախության հարցը 1988, մասամբ նաև 1989 թթ. դեռևս համաժողովրդական ընդունելություն չէր գտել և ԱԻՄ-ի կողմից առաջ քաշվող գաղափարները դեռևս չէին բխում այդ ժամանակների Ղարաբաղյան շարժման տրամաբանությունից: Բոլոր դեպքերում, անկախության նվաճման ճանապարհին պետք էր նաև ձեռքբազատվել մի շարք կարծրատիպերից: Այդ դժվարին գործի իրականացման ուղղությամբ առաջին քայլերի պատասխանատվությունն իր վրա էր վերցրել ԱԻՄ-ը: Ատենախոսության այս բաժնում պատմական լայն հենքի վրա մանրամասնորեն լուսաբանված են նշյալ կուսակցության կողմից առաջ տրանսպարանտ-կարգախոսները («Չայերի ցեղասպանության գազաթնակետը 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրն է», «Մեր ցեղասպանության գազաթնակետը Չայաստանի բռնի խորհրդայնացումն էր», «Չայոց Սեծ եղեռնը 1920-1988 թիւն է», «1921 թ. մարտի 16-ի. Լենին-Աբաբուրջ պայմանագիրը ապօրենի է», «1915 թ. եղեռնը Ռուսաստանի և երիտթուրքերի գործն է», «Մեր ցեղասպանութեան գազաթնակետը Չայաստանի բռնի սովետացումն է» և այլն), ուրվագծված է հայ պատմագիտության վերաբերմունքը այդ հարցերի նկատմամբ: Նկատվում է, որ շարքային քաղաքացու համար նորույթային բնույթ կրող այդ հարցադրումները որոշակի դեր էին խաղում տասնամյակներ շարունակ քարոզվող երևույթներին այլ, ավելի քննական հայացքով դիտելու գործում:

§ 3. «Մենք պետք է կռվենք, և ոչ լաց լինենք...»: 1990 թ. Բաքվի հայերի հունվարյան ջարդերից հետո տեղի ունեցան աղրբեջանցի գրոհայինների հարձակումներ Նախիջևանի ինքնավար հանրապետության հայ-աղրբեջանական սահմանի գանազան տեղամասերում: Անմիջապես կազմվեցին կամավորական մարտական ջոկատներ. մարդիկ կռվի էին գնում հին ու նոր որսորդական հրացաններով, զինապահեստներից առգրավված զենքերով: Ժողովուրդը զինված ջոկատների մարտիկներին՝ XIX դարավերջի և XX դարասկզբի թուրքական բռնակալության դեմ պարտիզանական բնույթի պայքարի ելած մարտիկների նմանողությամբ, որակեց որպես *ֆիդայիներ* և ընդգծված հարգանքով էր մոտենում նրանց: Կարելի է ասել, որ այդ դեպքերից հետո էր, որ *ժողովրդի գիտակցության մեջ վերջնականապես երրորդական-չորրորդական պլան մղվեց գոհի ինքնապատկերացումը*: Այն փաստը, որ մարդիկ չէին ցանկանում իրենց զգալ որպես ցեղասպանության զոհ, անմիջապես արտահայտություն գտավ ցուցապաստառներում: Թերևս վերաբերմունքի նման փոփոխության հետևանքով էր, որ 1990 թ. ապրիլի 24-ի շուրջ 60 պակատներում ու տրանսպարանտներում իսպառ բացակայում էին արդարություն պահանջող և խնդրողական երանգ ունեցողները: Արդեն այն փաստը, որ դրանց 95%-ը հայերեն էր գրված, վկայում էր, որ այդ ցուցապաստառներն ուղղված էին առաջին հերթին մեր իսկ ժողովրդին:

Այսպես, զենքի և պայքարի կոչող ցուցապաստառների թվում այդ օրը արձանագրվեց Խրիմյան Հայրիկ Ամենայն հայոց կաթողիկոսի հեղինակությունը ցուցող մեջբերումներով ստեղծված երկու տրանսպարանտ՝ «... Հոն, ուր զենքն է խոսողը, ուր սուրերը կշողողան, հոն ինչ գործ ունին խնդիրը և աղերսաթուղթեր»: *Խրիմյան Հայրիկ* և «*Ժողովուրդ հայոց. ամենան առաջ քո վրայ դիր, քո խելքին և բազուկն ուժ տուր. մարդ ինքիմեն պետք է աշխատի, որ փրկվի*» *Խրիմյան Հայրիկ*: Ատենախոսության մեջ հանգամանորեն հետազոտվում են այս տողերի երևան գալու շարժառիթները, դիտարկվում են ակունքները, վեր է հանվում դրանց նշանակությունը:

Ազգային-ազատագրական պայքարի զինված փուլի սկզբնավորումը, կանոնավոր բանակի բացակայության պայմաններում այդ պայքարի ֆիդայական երանգների ձեռք բերումը հանգեցրեց նաև XIX դարավերջի և XX դարասկզբի ֆիդայական «մշակույթի» այլ տարրերի վերաարթնացմանը շատ ավելի լայն ծավալներով, քան էր մինչ այդ: Տվյալ դեպքում խոսքը, մասնավորապես, վերաբերում է ֆիդայական երգերին: Ինչպես և նախկինում, XX դարավերջում ևս դրանց նպատակն էր ոտքի հանել, պայքարի կոչել ժողովրդին՝ իր արժանապատվությունը և հայրենի հողը թշնամական ոտնձգություններից պաշտպանելու համար: Որոշ երգերի կռվելու և զենքի դիմելու տողերն այնքան համապատասխան էին ստեղծված իրադրությանը, այնքան ամբողջական էին արտահայտում մարդկանց հույզերն ու ցանկությունները, որ դրանց առանձին, առավել բնութագրական տողերը հայտնվեցին ցուցապաստառներին: Այսպես, «Մենք պետք է կռուենք» երգի առաջին *«Մենք պետք է կռվենք և ոչ լաց լինենք / Ազգի կորուստը զենքով ետ խլենք»* երկտողը 1990 թ. ապրիլի 24-ին արձանագրվեց վեց տարբեր ցուցապաստառներում: Շուրջ 80-ամյա վաղեմության հայրենասիրական մեկ երգի բառերի այսքան բազմակի մեջբերումը վկայում է ոչ միայն երգի ստեղծման ժամանակների՝ 1900-ական ու 1980-ական թվականների իրադրությունների նմանության մասին, այլև՝ իր այժմեական հնչողություն ունենալու շնորհիվ՝ XX դարասկզբին և դարավերջին ապրող հայ մարդկանց մտածելակերպում նմանությունների առկայության մասին:

Արդար հատուցման նպատակով հայ երիտասարդները զենքի օգնությամբ էին դիմում ոչ միայն XIX դարավերջին և XX դարասկզբին, այլ նաև 1970-80-ական թթ. «խաղաղ» տարիներին: Խոսքը վերաբերում է նախ և առաջ Միջին Արևելքի երկրների հայության շրջանում 1970-ական թվականներին կազմավորված տարբեր զինյալ խմբավորումներին: 1990 թ. ապրիլի 24-ին մի ամբողջ շարք պակատներ նվիրված էին այդ կազմակերպությունների մարտիկների (Ջ. Սարգսյան, Լ. Էքմեքչյան, Ս. Մադարյան) գործողությունների նկարագրությանը, ասես հիշեցնելով հանուն արդար հատուցման՝ պայքարի ահաբեկչական եղանակին դիմելու հնարավորության առկայությունը ևս: Սակայն, ընդհանուր առմամբ, Ղարաբաղյան շարժման տարիներին մերժվում էր հարցերը «վրեժ հանելու» ճանապարհով լուծելու քաղաքականությունը: Փոխարենը *առաջ էր քաշվում հայության նկատմամբ իրականացված անարդարությունների համար հատուցման, պատասխանատվությունից խուսափելու անհնարինության գաղափարը*, ինչի մասին վկայող ցուցապաստառներից մեկն էր երկուսը՝ «*Արյունոտ դաշինքը* [Ռուսաստանի և Թուրքիայի միջև - Գ. Ս.] *պետք է հատուցի*» և «*Գարշելի ցեղասպաններ շուտով կզգայ հայ բազկի ուժը*»:

Եվ կրկին շեշտենք, որ 1990 թ. ապրիլի 24-ի ցուցապաստառների հիմնական բեման *պայքարի գաղափարն էր*, որի վկայություններից մեկն էլ անբեկանելի հանդգնումի ձևով հնչող տրանսպարանտային ձևակերպումներն էին. «*Հարատևում է պայքարող ժողովուրդը*», «*Ազգի պայքարը արյամբ չէք խեղդի*» և «*Սուրը հավերժ է, երբ պայքար չկա*»:

ԳԼՈՒԽ ՅՈՒԹԵՐՈՐԴ. «ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ»  
ՀԱԿՎԱՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԸՆԴԱՍՅՈՒՄԸ,  
ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ղարաբաղյան շարժման տարիներին, սուեզայիթյան կոտորածներից հետո (որոնք միանշանակ համարվեցին Մեծ եղեռնի հետ), հայ ժողովրդի գոյությանը սպառնացող կամ որպես այդպիսին ընկալվող ցանկացած վտանգ դիտվում, գնահատվում էր ցեղասպանության լուսի ներքո: Արդյունքում «ցեղասպանություն» եզրը՝ ժողովրդական ընկալմամբ, իր մեջ ներառեց «սպիտակ եղեռն» (Նախիջևանի ու Լեռնային Ղարաբաղի հայաթափման օրինակով), «էկոլոգիական ցեղասպանություն», «կենսաբանական, քիմիական եղեռն», (հայկական ատոմակայանի, «Նաիրիտ»-ի օրինակով), «մշակութային, հոգևոր եղեռն» (հայոց լեզվի դերի նվազման, Հայաստանի սահմաններից դուրս հայկական հուշարձանների ոչնչացման օրինակով) հասկացությունները, որոշ քաղաքական ուժերի կողմից խորհրդային կարգերը նույնպես դիտարկվում էին ցեղասպանության լուսի ներքո:

§ 1. «Տեր-Չոր... Սուեզայիթ... Ատոմակայան... Նաիրիտ»: Ցուցապաստառների մի մեծ խումբ ուներ գոյապահպանական ուղղվածություն: Գոյապահպանական շարժման հիմնական «թիրախներն» էին հայկական ատոմակայանը և «Նաիրիտ» գիտաարտադրական միավորումը, որոնք դիտվում էին որպես հանրապետության և, մասնավորապես, երևանի բնակչության ֆիզիկական գոյությանը սպառնացող իրական վտանգի աղբյուրներ:

Այսպես, 1988 թ. ապրիլի 24-ին, մարդիկ տանում էին ցուցապաստառներ, որտեղ հայկական ատոմակայանն ընդգրկված էր «ցեղասպանությունների շարքում»՝ «Տեր-Չոր - Ալթայ - Ատոմակայան - Սուեզայիթ», դիտվում էր իբրև Մեծ եղեռնի նորոյա դրսևորում՝ «*Ատոմակայանը 1915 թ. շարունակությունն է*», այն

ներկայացվում էր իբրև ցեղասպանության իրականացման հնարավոր միջոց, գործիք, ինչպիսին որ էր պանթուրոլիզմը XX դարասկզբին, ուղղակիորեն կոչ էր արվում «*Վերջ ատոմակայան եղեռնին*»:

Քիչ չէին նաև այն ցուցապաստառները, որոնք «Նաիրիտ» էին ներկայացնում ցեղասպանության լույսի տակ: Արդեն իսկ 1988 թ. ապրիլի 24-ին մի տրանսպարանտ հիշեցնում էր, որ «*Այսօրվա կենսաբանական եղեռնը 1915 թ. շարունակությունն է*», իսկ նույնը բերին կոչ էր արվում «*Դադարեցնել քիմիական եղեռնը*», այն ներկայացվում էր իբրև Տեր-Ջորիմ և Սունգայիթին համազոր երևույթ: Քանի որ «Նաիրիտ» վտանգը շարունակվում էր իրական լինել Շարժման հաջորդ տարիներին ևս, մարդիկ տրանսպարանտների միջոցով պահանջում էին «*Դադարեցնել հայ ժողովրդի կենսաբանական եղեռնը*», հարցը կտրուկ էին դնում «*«Նաիրիտ» կամ հայ ժողովուրդը*», կոչ էին անում «*Կորչի «Նաիրիտ» եղեռնը*» և այլն:

§ 2. «*Հայ երեխային - հայկական դպրոց*»: Այս, ինչպես նաև «*Լեզուն դավելը սպիտակ եղեռն է*», ևս մեկ տարի անց՝ «*Փրկության անի՝ հայկական դպրոց*», «*Ազգը պահողը լեզուն է*» ցուցապաստառների երևան գալը պայմանավորված էր այն հանգամանքով, որ խորհրդային իշխանության տարիներին, հատկապես 1970-80-ական թվականներին, մի շարք գործընթացների հետևանքով, զնալով նեղանում էր հայոց լեզվի գործածության ոլորտը, արդյունքում մեծանում էր ռուսաց լեզվի դերը և, որպես հետևանք, անընդհատ աճում էր ռուսական կրթություն ստացող հայ աշակերտների թիվը: Հանրապետությունում արձանագրված էր հայ-ռուսերեն երկլեզվության խիստ բարձր տոկոս և եթե այդ միտումը նույն ընթացքով շարունակվեր հաջորդ կես դարի ընթացքում, երևանում հայկական դպրոցները կմարերին:

Ահագանգը միաժամանակ անց կարծես թե լսելի դարձավ և հենց Շարժման տարիներին որոշ ռուսական դպրոցների աշակերտությունը և տնօրինությունը հայտարարում էին իրենց թեքումը փոխելու և հայերենով դասավանդման անցնելու մասին: Այս երևույթը համապատասխան բարեփոխումներով (թերևս ավելի հեղափոխական-արմատական, քան անիրաժեշտ էր այդ տարիներին) պետական ուղղորդում ստացավ անկախության նվաճումից հետո:

§ 3. «*Պատմական հուշարձանների ավերումը - հոգևոր եղեռն է*»: Պետական մակարդակով հայկական հուշարձանները քանդելու կամ «աղվանական» հայտարարելու ճանապարհով յուրացնելու գործընթացը լայն թափ էր ստացել Ադրբեջանում: 1988 թ. գարնանից ի վեր շրջանառության մեջ էին բազմաթիվ լուսանկարներ, ուր պատկերված էին մի քանի մասերի բաժանված մախիջևնյան խաչքարեր, ձևափոխված ճարտարապետությամբ հայկական ժողովրդական տներ Շուշիի տարածքում և այլն: Այդ երևույթը շատ-շատերի կողմից ընկալվում էր իբրև «սպիտակ եղեռնի» քաղաքականության դրսևորում:

§ 4. «*Ցեղասպանություններից խուսափելու հնարները և ժողովրդական քաղաքականության եզրերը*»: Այս հարցի լուծման տրանսպարանտային տարբերակները՝ հենված թե XX դարի, թե հայոց պատմության փորձին, առաջ էին քաշվում սունգայիթյան իրադարձություններից հետո, Ղարաբաղյան շարժման հետագա ողջ ընթացքում:

Առաջարկների մի մասը իրավաքաղաքական բնույթի էին: Այսպես, 1988 թ. ապրիլի 24-ին ցեղասպանությունից խուսափելու համար առաջարկվում էր հետևյալ լուծումը՝ «*Հարգելով Ղարաբաղցիների ինքնորոշման անկախտելի իրավունքը՝ կկանխենք նոր եղեռնը՝ կարմիր և սպիտակ: Դա է՝ լինել լեռնյաններ՝ խոսքով և գործով*»:

Մի քանի այլ տրանսպարանտային ձևակերպումներ առաջարկում էին հարցի լուծմանը հասնել ցեղասպանության փաստի ճանաչման («*Нежелание признать геноцид 1915 г. привело к геноциду 1988 г.*», «*Եթե ՍՄԴՄ կառավարության կողմից ճանաչվեր 1915 թ. ցեղասպանությունը՝ 1988 թ. Սունգայիթը չէր լինի*», «*Մարդկությունը պարտավոր է ընդունել 1915 թ. փաստը, որ չկրկնվեն սունգայիթները*»), կազմակերպված ջարդերի դատապարտման ու մեղավորների պատժման («*Безнаказанность организованных погромов рождает новые погромы*») ուղիով:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական, դեմոկրատական բնույթի պայքարի նկատմամբ խորհրդային կայսրության կողմից որդեգրված քաղաքականությունը բերում էր հայության շրջանում նորանոր զոհերի ու տարածական կորուստների: Դրանից խուսափելու իրավաքաղաքական բնույթի մեկ այլ, բավականին արմատական ելք էլ էր առաջարկվում՝ «*Ցեղասպանությունից փրկվելու միակ ելքը անկախությունն է*», «*Սունգայիթի պատասխանը Հայաստանի անկախությունն է*», «*Ցեղասպանությունից փրկվելու միակ ելքը անկախությունն է: Եղիցի ազատ ու անկախ Հայաստան*» և այլն: Տրանսպարանտային այս բանաձևերի հեղինակն, ամենայն հավանականությամբ, Ազգային ինքնորոշում միավորումն էր:

Ցեղասպանության չենթարկվելու համար որակապես այլ լուծում էր առաջարկվում 1988 թ. նույնների վերջերի մի պլակատային դրվագում՝ «*Դեր Ձոր, Շուշի, Սունգայիթ / Ուր էք, Վարդան ու Դավիթ / Հերիք տեղ տանք ճառերին / Ու հատընտիր բառերին*», փաստորեն կոչ անելով կատարել ընտրություն քաղաքական պայքարի զուտ խաղաղ ուղիների և զինված պայքարի միջև: Երկուսուկես տարի անց, երբ խորհրդային զորամիավորումներն ադրբեջանական ռազմածի հետ միասին պատժիչ գործողություններ էին իրականացնում Լեռնային Ղարաբաղում, խաղաղ բնակիչներին բռնի ուժով հեռացնում էին իրենց բնակության վայրերից՝ հայ ազգային զորամիավորումների բացակայությունը ներկայացվում էր որպես ցեղասպանության իրականացման հնարավորություն՝ «*Ազգային բանակի բացակայությունը նոր ցեղասպանության մախապատրաստում է*»:

Այս ամենն ամբողջացնելու էր ասես միտված պատմությունից դասեր քաղելու կոչող տրանսպարանտային բանաձևը՝ «*Իր պատմությունը մոռացած ժողովուրդը դատապարտված է այն կրկնելու...*» 9. *Նժդեհ*»:

Ապագա ցեղասպանություններից խուսափելու և, ընդհանրապես, հայ ժողովրդի առջև ծառայող խնդիրները լուծելու համար Ղարաբաղյան շարժման ցուցապաստառների առաջարկած միջոցների թվում առաջին իսկ օրից ուրույն տեղ ուներ Ե. Չարենցի գրչին պատկանող հայությանն ուղղված համախմբման կոչը՝ «*Ով հայ ժողովուրդը քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է*»:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայոց ինքնության համատեքստում կոլեկտիվ և պատմական հիշողության դերի (XX դարի պատմա-ազգագրական նյութերի հիմամբ) համակողմանի քննարկման արդյունքում հանգել ենք մի շարք հետևությունների, այդ թվում ներքերը յալների.

1. Ինչպես աշխարհի շատ այլ ժողովուրդների մեջ, նույնպես և հայոց պարագայում, անցյալի վերհիշումը ակտիվ, կառուցողական գործընթաց է, այլ ոչ թե տեղեկատվության սովորական վերականգնում: XX դարի հայաստանյան իրականության մեջ կարելի է ֆիքսել ազգային ինքնության համատեքստում անցյալի

ու ներկայի փոխհարաբերությունների շուրջ ընկալումների երեք բնույթի դրսևորումներ. (ա) անցյալը փոփոխական է, այն կերտվում ու վերակերտվում է ներկայի օգտագործման համար, ներկայի պահանջմունքներից էլնելով, (բ) կոլեկտիվ հիշողությունները վերապրում են հասարակության ներսում տեղ գտած փոփոխությունները և ավելին, անցյալն է, որ ձևավորում է ներկայի մասին մեր պատկերացումները և ըմբռնումները, այլ ոչ հակառակը, (գ) նույն ներկան կարող է կրել տարբեր հիշողություններ և տարբեր ներկաներ կարող են կրել միևնույն հիշողությունը ու, այդպիսով, կոլեկտիվ հիշողությունը քաղաքական մշակույթի մեջ ժամանակի միջով ընթացող քննարկումների դիմանկի, շարունակական գործընթաց է:

2. Պատմական հիշողության պահպանման և սերնդե-սերունդ փոխանցման, կոլեկտիվ հիշողության նոր շերտերի ձևավորման գործում մեծ դեր ունեն տարեդարձային նշումները, հիշատակումները: Եթե մինչև 1980-ական թթ. վերջերը դրանք՝ պետականորեն կարգավորվող մեխանիզմի մաս լինելով, ուղղված էին լինում իրադարձությունների լոկ նշումներին, հարգանքի տուրքի մատուցմանը, կամ իշխանությունների նկատմամբ հավատարմության, առնվազն լոյալության դրսևորումներ էին, ապա Ղարաբաղյան շարժման տարիների դրանք լայնության օգտագործվում էին որոշակի ուղղորդվածություն ունեցող քաղաքական նպատակներով, մասնավորապես՝ հանրապետական ու միութենական իշխանությունների, ԽՍՀՄ ղեկավարության, խորհրդային բանակի, կենտրոնական մանուլի գործողությունների, հանրապետության ներքին քաղաքական կյանքի քննադատության հզոր դրսևորումներով միտված էին ժողովրդական լայն զանգվածների քաղաքական գիտակցության բարձրացմանը: Այսինքն՝ ճգնաժամային իրավիճակներում տարեդարձային նշումների խողովակներով հիշողության փոխանցման մեխանիզմները որակական փոփոխություն են ապրում:

3. Ժողովրդի պատմական և կոլեկտիվ հիշողության որոշ կարևոր տարրեր կարող են գտնվել համեմատաբար պասիվ, «նիրհող» վիճակում և ապա, արտաքին կամ ներքին ազդակների հետևանքով «արթնանալ», ձեռք բերել ակտիվ, անզամ որոշիչ գործունի գործառույթ, ինչպես որ էր հայոց ցեղասպանության հիշողության հետ մինչև Ղարաբաղյան շարժումը ու 1988 թվականին սուվզայիթյան իրադարձություններից անմիջապես հետո: Մասնավորապես վերջին պարագան միանշանակ ընկալվեց որպես հայության, նրա մի հատվածի դեմ իրականացված ցեղասպանություն, մասնավոր, որ բռնությունների մեթոդները գրեթե նույնությամբ կրկնում էին XIX դարավերջին և XX դարասկզբին իրականացված կոտորածների ու ցեղասպանության ձևերը:

4. XX դարի հայոց ինքնության կառուցվածքում կոլեկտիվ և պատմական հիշողության դերի ուսումնասիրության գործում էական նշանակություն ունի ժողովրդական զանգվածների ակտիվ մասնակցությամբ ստեղծված պատկերագրությունը ու, մասնավորապես, Ղարաբաղյան շարժման ցուցապաստառային նյութը, որը թույլ է տալիս բավարար ընդգրկմամբ հետահայաց հայացք ձգել ողջ դարի ընթացքում տեղ գտած ու հայոց համար նշանակալից ընկալվող իրադարձություններին: Ներկա ատենախոսությամբ նշված բնույթի աղբյուրագիտական նյութն առաջին անգամ է գիտական լայն շրջանառության մեջ դրվում, իսկ այդ հենքով նման ծավալի ու բնույթի հարցադրումներ արվում են նույնպես առաջին անգամ: Ցուցապաստառները հանդես են գալիս իբրև ազգային ինքնության յուրահատուկ ցուցիչներ, իսկ դրանց բովանդակային փոփոխությունները դառնում են ինքնության վերափոխման գործընթացի յուրատեսակ դրսևորումներ:

Ղարաբաղյան շարժման տարիների ցուցապաստառային նյութի համակողմանի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցում արտացոլված է XIX դարավերջի - XX դարի հայերի ցեղասպանության, կոտորածների ու ջարդերի գրեթե ողջ ներկայակեր, ինչը վկայում է նաև, որ դրանք XX դարավերջի հայության պատմական ու կոլեկտիվ տրավմատիկ երանգներ ունեցող հիշողության նկատելի մասն են կազմում:

5. Նյութերի վերլուծությունը ցուցում է, որ մարդկանց համար հենց ցեղասպանություն ընկալվող սուվզայիթյան իրադարձությունների գնահատականն է դառնում խորհրդային տասնամյակների ընթացքում ձևավորված կաղապարների փորձաքարը, մի խոչընդոտ, որի վրա սայթաքում են, որը չեն կարողանում հաղթահարել շուրջ յոթանասուն տարի քարոզվող խորհրդային պարադիգմերը՝ ճշմարտության հայելի մամուլը, ժողովուրդների անխախտ բարեկամությունը, ԽՍՀՄ-ն, իր քաղաքացիների բարօրության մասին օրուգիշեր մտածող Կենտրոնը, հայության գոյապահպանության նեցուկ ընկալվող խորհրդային-ռուսական բանակը, ամենաարդար դատական համակարգը և այլն: Ցուցապաստառային տեքստերն ու պատկերներն ուղղակիորեն վկայում են, որ դրանց կերտողները և ի ցույց դնողները արդեն իսկ թոթափել են խորհրդային առասպելների ծանրությունը, և ոչ միայն ձեռքազատված են պետության ամենագոր մարմիններին քննադատելու վախերից, այլ նաև նրա հասցեին բառացիորեն ասում են այն, ինչ մտածում են: Ուսումնասիրողի առջև վեր է հանում Շարժման ընթացքում ամբողջատիրական գաղափարախոսության կապանքները թոթափած քաղաքացին և, որ տվյալ համատեքստում կարևոր է՝ ազատ մտածողության ձևավորման հարցում նրա համար ուղեմիջային դեր է ստանձնում հենց պատմական և կոլեկտիվ հիշողության կարևորագույն՝ ցեղասպանության հիշողության տարրը: Այսինքն, ցեղասպանության գործոնը դառնում է այն լոկոմոտիվը, որը հնարավորություն է ընձեռում քայլ առ քայլ փոխելու հին պատկերացումները և կարծրատիպերը, ձևափոխելու հին արժեքների վրա հենված ինքնությունը և աստիճանաբար ձևավորելու նոր ինքնություն:

6. Հայերի ցեղասպանության հիշողությունը, շնորհիվ XX դարասկզբի Մեծ եղեռնի և XX դարավերջում հայերի նոր կոտորածների ու ջարդերի, շարունակում է մնալ հայոց ազգային ինքնության կարևորագույն բաղադրիչը: Մինչև 1988-1990 թթ. իրադարձությունները ժողովրդական լայն զանգվածների մեջ այն գերազանցապես դրսևորվում էր անցյալի լոկ վերհիշման, վերապրելու, սգալու և նման բնույթի գործողություններում: Շարժման տարիներին, ինչպես ցույց տվեց նյութի քննությունը, ցեղասպանության ճանաչման, այն իրականացնողների և կազմակերպիչների բացահայտման, հնարավոր մեղավորների մատնանշման, նրանց նկատմամբ տարվող դատավարությանը գնահատական տալուն ուղղված պայքարը քայլ առ քայլ բերում էր ժողովրդական զանգվածների քաղաքական հասունության աճի, դարերի և տասնամյակների ընթացքում ձևավորված կարծրատիպերի փոփոխման, անցյալի և ներկայի վերագնահատման գործընթացին, իսկ ապագա ցեղասպանություններից խուսափելու նպատակով գիտակցվում էր հասարակության կառավարման առկա մեխանիզմների, ընդհանրապես քաղաքական փոփոխությունների անհրաժեշտությունը: Այսպիսով, Ղարաբաղյան շարժման մեջ ցեղասպանության թեման, դուրս գալով սկզբնական շրջանին բնորոշ ցավի ու մորմոքի սահմաններից, մարդկանց մղում էր ակտիվ գործողությունների, որոնք, ի վերջո, ավարտվեցին արմատական փոփոխությունների ակնկալիքով ստեղծված նոր խորհրդարանի ձևավորմամբ:

7. Ատենախոսության մեջ բերված նյութի վերլուծությունն այն համոզմունքն առաջացրեց, որ XX դարասկզբի իրադարձություններով պայմանավորված հայերի պատմական հիշողությունը և XX դարավերջի իրադարձությունների ընթացքին անցյալի հենքով ձևավորված կոլեկտիվ հիշողությունը ձևափոխման գործընթաց է ապրում. XX դարավերջի ճգնաժամից դուրս գալու փորձը զուգակցվում է XX դարասկզբի ճգնաժամի հաղթահարման համար մղվող պայքարով, որի դրսևորումներից մեկն էլ այն է լինում, որ արդարություն և կարեկցանք հայցող զոհի խորհրդանիշը իր տեղը գիշում է մարտիկի կերպարին, որը գիտակցել է, որ ազգային նպատակների իրագործմանը կարելի է հասնել միայն պայքարի ճանապարհով: Բնութագրական է, որ ինչպես XX դարավերջին, նույնպես և XX դարասկզբին ճգնաժամային իրավիճակը հաղթահարելու փորձը սկզբնական փուլում զուգակցվում էր պայքարի ֆիդայական եղանակի գերապատվությամբ, ապա և կազմակերպված զինուժի գործողություններով: Հայ ինքնության մեջ տեղ գտած թերևս հենց այս փոփոխությունն էր, որ հանգեցրեց Արցախի ազատագրման համար մղվող պայքարի հաջողությանը:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱՅՈՒՎԱԾ Ե ԴԵՂԻՆԱԿԻ ԳՐԱՏԱՐԱՎԱԾ ԳԵՏԵՎՅԱԼ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1. Транспаранты и плакаты, как зеркало Карабахского движения. – Всесоюзная научная сессия по итогам полевых этнографических и антропологических исследований 1988-89 гг. Тезисы докладов в трех частях. Часть 1. Алма-Ата, 1990, с. 122-123 (соавтор: Л. А. Абрамян).
2. The Genocide of the Armenians. Historical memory and transformation of ethnic stereotypes (according to the materials of banners and posters of Karabagh movement). – “Synopsis”. Volume 3: Armenia: Viewed from inside and outside. Yerevan, 1994, pp. 111-119.
3. Геноцид армян. Историческая память и трансформация этнических стереотипов (по материалам транспарантов и плакатов Карабахского движения). – В сб.: Армяне Северного Кавказа // Studia Pontocaucaica: II. Краснодар, 1995, с. 160-169.
4. Иконография Карабахского движения и трансформация армянской идентичности. – “Вопросы этнологии Кавказа”. Первая международная конференция. Краткое содержание докладов. Ереван, 1999, с. 27-31.
5. Ղարաբայան շարժման ցուցապաստառները՝ որպես մշակութային նոր դրսևորում և փոփոխվող հասարակության ցուցիչ. - «Ժողովրդավարության զարգացումը Հայաստանում» սեմինարի նյութեր, Երևան, 1999, էջ 184-189:
6. Հայ պոեզիան որպես ինքնութեան պատկերագրութիւն (ըստ Ղարաբաղեան շարժման ցեղասպանութեանը նուիրուած ցուցապաստառների). - Հայկազեան հայագիտական հանդես, հ. Ի (20), 2000, էջ 269-306:
7. Iconography of Gharabagh Movement: An Index of the Transformation of Armenian Identity. - *Armenian Forum. A Journal of Contemporary Affairs*, volume 2, number 4, Winter 2000, p. 39-55.
8. Тема геноцида в иконографии армянской идентичности: венки-плакаты (по материалам Карабахского движения). – Лавровские (Среднеазиатско-Кавказские) чтения 1998-1999 гг. Краткое содержание докладов. Санкт-Петербург, 2001, с. 126-128 (соавтор: Л. А. Абрамян).
9. К вопросу о роли исторической памяти в национальных движениях. – IV Конгресс этнографов и антропологов России. Тезисы докладов. Москва, 2001, с. 96.

10. Ծաղկեպսակը որպես ցուցապաստառ (ցեղասպանութիւնը եւ հայ ինքնութեան պատկերագրութիւնը). – Հանդես Ամսօրեայ, 2001, էջ 355-407:
11. Սումգաիթեան ջարդեր. իրողութիւն, գնահատում եւ պատմական յիշողութիւն. - Հանդես Ամսօրեայ, Վիեննա, 2002, էջ 158-206:
12. Հայ ինքնության ձևափոխման հիմնական ուղղությունները Ղարաբայան շարժման տարիներին. - «Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները». Հայագիտական միջազգային առաջին համաժողով, զեկուցումների դրույթներ, Երևան, 2003, էջ 55-56:
13. «Մենք պետք է կռուենք, եւ ոչ լաց լինենք...». անցեալի եւ ներկայի վերազնահատման գործընթացը Ղարաբայան շարժման համատեքստում. - Հանդես Ամսօրեայ, 2003, էջ 411-468:
14. Стратегия избежания геноцида согласно транспарантам и плакатам Карабахского движения. – Археология, этнология и фольклористика Кавказа. Материалы международной конференции. Ереван-Эчмиадзин, 2003, с. 306-309.
15. Историческая память в контексте этнокультурного единства и многообразия Южнокавказского региона. – В сб.: Южный Кавказ: Этнокультурное разнообразие и единство региона. Материалы III международной конференции. Южнокавказская сеть за гражданское согласие. Тбилиси, 2003, с. 9-19 (на русск. яз.), 69-78 (на англ. яз.).
16. Սգո երթերը, անմեղ զոհերի հիշատակի օրերը որպես ժողովրդական հավատալիքների դրսևորման ձևեր. - «Հայ ժողովրդական մշակույթ» հանրապետական գիտաժողով: XII. Հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, 2004, էջ 98-102.
17. Фактор исторической памяти в контексте Армянской революции 1988-1990 гг. – Международная научная конференция “Археология, этнология и фольклористика Кавказа”. Сборник кратких содержаний докладов. Тбилиси, 2004, с. 215.
18. Ցեղասպանության հիշողությունը որպես նոր ինքնության ձևավորիչ (1980-ական թվականների վերջ - 1990-ական թվականների սկիզբ). - Պատմա-բանասիրական հանդես, 2005, թիվ 1, էջ 55-66:
19. Значение транспарантов и плакатов в мобилизации общества. - VI Конгресс этнографов и антропологов России. Тезисы докладов. Санкт-Петербург, 2005, с. 386.
20. Հուշարձանը որպես գերեզմանոց (Ցեղասպանության հուշահամալիրի օրինակով). - «Հայ ժողովրդական մշակույթ» XIII. Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, Երևան, 2006, էջ 172-180:
21. Карты как символы национального движения в Армении. – В сб.: Mythical Landscapes Then And Now: The Mystification of Landscapes in Search for National Identity, Yerevan, 2006, pp. 229-250, 279-285.
22. Քարտեզը որպես ինքնութեան խորհրդանիշ. - Հանդես Ամսօրեայ, 2006, էջ 443-478:
23. Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում. տեսական հարցադրումներ, Երևան, «Նորվաճակ» գիտակրթական հիմնադրամ, 2006, 89 էջ:

КОЛЛЕКТИВНАЯ И ИСТОРИЧЕСКАЯ ПАМЯТЬ  
В КОНТЕКСТЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ  
(ПО ИСТОРИКО-ЭТНОГРАФИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ XX ВЕКА)

РЕЗЮМЕ

Главная цель диссертации – на основе историко-этнографических материалов XX века выявить место и роль коллективной и исторической памяти (в частности, памяти о геноциде армян и о резне и погромах, воспринимаемых как геноцид) в контексте армянской национальной идентичности, ее составные элементы и основные формы проявления, формирующие факторы, механизмы построения и пути трансформаций, мобилизационный потенциал, ее роль во взаимоотношениях между прошлым и настоящим.

На основе материалов Карабахского движения 1988-1990 гг., ретроспективного анализа тех событий XX века, которые воспринимаются армянами как имеющие существенное для них значение, в работе исследованы, в частности, попытки выхода из кризиса конца XX века и способы их сочетания с борьбой за преодоление кризиса начала XX века; детально рассмотрена роль коллективной и исторической памяти в трансформации политической культуры общества; представлена роль дней памяти в деле сохранения и передачи памяти; изучена иконография Движения с ее тематической многогранностью как способ проявления идентичности. В работе также обстоятельно исследована роль геноцида 1915 года в коллективной и исторической памяти армян; проанализированы пути активизации “дремлющей” памяти; раскрыта связь проявлений коллективной памяти с системой народных верований и культурно-бытовыми особенностями; выявлены народные сопоставления геноцида армян и сумгаитских погромов; показана роль и значение цитат из литературно-художественных произведений в формировании идентичности; обсуждены способы проявления дат и названий топонимов в коллективной и исторической памяти; изучены проявления памяти в формулировках эмоций и скорби; исследован процесс переоценки прошлого и настоящего; освещена связь между расширением границ понятия “геноцид” и национальной идентичностью; представлено, как воспринимаются народом политические способы избегания возможных повторений погромов и геноцидов и т.п.

Настоящим исследованием детально аргументируется, что память о геноциде армян, из-за геноцида начала XX века и новых погромов конца XX века, продолжает оставаться главнейшей составной частью армянской национальной идентичности. В годы Карабахского движения, как показывает анализ различных материалов, борьба, направленная на признание геноцида и воспринимаемых как геноцид сумгаитских погромов, осуждение их исполнителей и организаторов, выявление возможных виновников, оценку суда над ними шаг за шагом приводила к росту политической зрелости народных масс, изменению стереотипов, сформировавшихся веками и десятилетиями, процессу переоценки прошлого и настоящего, осознанию необходимости изменений имеющихся механизмов управления обществом, вообще политических изменений с целью избегания новых геноцидов. Анализ материалов показывает, что для людей именно оценка сумгаитских событий становится пробным камнем многочисленных стереотипов, сформировавшихся в годы советских десятилетий, тем препятствием, которое не могут преодолеть пропагандируемые около 70 лет советские парадигмы:

печать – зеркало правды; нерушимая дружба народов; КПСС; Центр, денно и нощно думающий о благосостоянии граждан страны; советская/русская армия, воспринимаемая как оплот существования армянства; самая справедливая судебная система и т.п.

Таким образом, тема геноцида в Карабахском движении, выходя за рамки боли и страдания, характерных для начального периода, толкала людей к активным действиям, которые в итоге закончились формированием – с надеждой на коренные изменения – нового парламента. Коллективная и историческая память армян о геноциде, ее связь с сумгаитскими событиями в годы Карабахского движения приобрели значение движущей силы революционных развитий, стали тем локомотивом, благодаря которому появилась возможность изменить старые представления и стереотипы, трансформировать основанную на старых ценностях идентичность и постепенно сформировать новую идентичность, одним из проявлений чего является то, что символ жертвы, просящей справедливости и сочувствия, уступает место образу борца, осознающего, что осуществления национальных целей можно достичь лишь путем борьбы. Возможно, именно это изменение, имеющее место в армянской идентичности, и привело к успеху в борьбе за освобождение Арцаха.

HARUTYUN MARUTYAN

COLLECTIVE AND HISTORICAL MEMORY IN THE  
CONTEXT OF ARMENIAN NATIONAL IDENTITY  
(BASED ON HISTORICAL-ETHNOGRAPHICAL  
MATERIALS OF THE 20<sup>th</sup> CENTURY)

The main objective of the thesis is to study the role of the collective and historical memory of Armenians (particularly, the memory of the genocide, as well as of carnages and pogroms perceived as genocide) in the context of the Armenian national identity, its components and main ways of expression, forming factors, mechanisms of construction and ways of transformation, its mobilizing potential and role in the relation between the past and the present.

Casting a retrospective glance at the events essential for the Armenian nation during the 20<sup>th</sup> century through materials of the Karabagh Movement (1988-1990), the attempts to overcome the crisis of the end of the 20<sup>th</sup> century were studied, these attempts being associated with the struggle directed towards overcoming the crisis of the beginning of the 20<sup>th</sup> century. In the thesis, the role of the collective and historical memory in transformations of the political culture of the society is thoroughly examined, as well as the role of commemorations in the mechanism of collective memory preservation and transmission. As a means of identity manifestation, the iconography of the Movement with its thematic variety is studied in detail.

The thesis also explores the role of the 1915 genocide in Armenian collective and historical memory and the ways of activating the “dozing” memory, it reveals the connection of the collective memory expressions with the system of national beliefs and peculiarities of culture and mode of life; manifests the popular comparisons between the Great genocide and the Sumgait pogroms. In addition, it indicates the role and significance of quotations from works of literature that were used in the iconography of the Karabagh Movement in the process of identity formation and examines how dates and toponyms were manifested in the collective and historical memory. The thesis studies the memory

representations in expressing mourning and emotions, observes the process of reevaluation of the past and of the present, relations between the broadened perception of the term "genocide" and the national identity, shows the popular perception of the political means to avoid genocides and massacres in future.

The study argues in detail that the memory of the genocide of the Armenians remains the principal constituent of Armenian national identity as a result of the genocide of the beginning of the 20<sup>th</sup> century and the new pogroms of Armenians towards the end of the 20<sup>th</sup> century. During the years of the Karabagh Movement, as the analysis of different materials show, one can observe a growth of political awareness of wide masses of the people along their course of struggle for recognizing the genocide and the Sumgait atrocities, perceived as a genocide, disclosing its initiators and perpetrators, and political assessment of their trials. This process was bringing step by step to the change of seemingly unbreakable stereotypes that had formed in the course of decades and even centuries. The past and the present were reevaluated; a need for radical political changes within the society was realized in order to prevent genocides in the future. The people understood that in order to solve the aforementioned problems, a change in the political structure is required.

The analysis of the material shows, that the comprehension of the Sumgait events as a genocide becomes the touchstone of the patterns acquired during the Soviet period, it becomes an obstacle that couldn't surmount the preaching Soviet paradigms being propagandized during the seventy years: mass media as the mirror of the truth, unbreakable friendship of nations, the communist party of the USSR, the Kremlin continuously caring for its citizens, the Soviet/Russian army considered to be the support of the Armenian subsistence, the fairest judicial structure, etc.

Thus in the years of the Karabagh Movement the theme of genocide, transgressing the limits of pain and sorrow typical for its initial stage drove people to activity that resulted in the formation of a new parliament, which was expected to choose the course of radical changes.

Collective and historical memory of Armenians on genocide, its connection with Sumgait events, during the years of the Karabagh Movement acquired the role of a moving force of revolutionary developments, became the locomotive, owing to which it becomes possible to change old perceptions and stereotypes, to transform the identity based on old values and gradually to form a new one. This process is signaled by the replacement of the image of a victim pleading for mercy and justice with that of a warrior who had realized that national objectives could be achieved through struggle only. It is exactly due to this change in the Armenian identity that led to the success in the liberation of Artsakh.

